**Duties in Certain Situations**

18. A panelist or former panelist shall avoid actions that may create the appearance that the panelist was biased in carrying out the panelist's duties or would benefit from the decision or report of the panel.

**Maintenance of Confidentiality**

19. A panelist or former panelist shall not at any time disclose or use any non-public information concerning the proceeding or acquired during the proceeding except for the purposes of the proceeding and shall not, in any case, disclose or use any such information to gain personal advantage, or advantage for others, or to affect adversely the interest of others.

20. A panelist or former panelist shall not at any time disclose the deliberations of a panel, or any panelist's view, except as required by legal or constitutional requirements.

## ANNEX IX
## ENERGY RESOURCES SECTOR

In connection with this Agreement, the Parties have reached the following understanding:

(a) The UAE is an independent, sovereign, federal State, with seven sovereign Member Emirates ("Member Emirates"), and pursuant to its Constitution, each Member Emirate retains full sovereignty, sovereign rights and exclusive jurisdiction over its natural resources and wealth of which the Energy Resources Sector is the subject matter of this Annex. For the purposes of this Annex, "Energy Resources Sector" shall mean all hydrocarbons such as oil, gas, and condensates, derivates and primary by-products thereof with respect to ownership, management, exploration, development and production, exploitation (including reservoir management), transportation, storage, refining and processing, and distribution up to and including retail distribution.

(b) In recognition of the foregoing, the Agreement shall not grant any rights to Armenia or create any obligations for the UAE or any of its Member Emirates with regard to the Energy Resources Sector. Accordingly, the Energy Resources Sector is excluded from all aspects and provisions of the Agreement, including Chapter 5 (Dispute Settlement). All matters pertaining to the Energy Resources Sector of any of the Member Emirates are within the exclusive jurisdiction of the Member Emirates, and all determinations and decisions of each Member Emirate made by such Member Emirate's competent authorities pertaining to the Energy Resources Sector ("Competent Authorities") that are the subject of its jurisdiction shall be final, binding and not subject to review or challenge.

(c) Notwithstanding the above, in the event of a difference in the interpretation or application of this Annex, the UAE and Armenia commit to have recourse to consultations at the request of either Party. For the purpose of such consultation, Article 5.6 (Consultations) except Article 5.6.8, shall apply *mutatis mutandis*. The Parties shall make every attempt through consultation to arrive at a mutually satisfactory resolution within 60 days from the request.

(d) In the event that the UAE and Armenia have failed to achieve a mutually agreed solution within 60 days following recourse to consultations, or if the UAE fails to comply with the mutually agreed solution within the agreed timeframe, the only recourse of Armenia shall be that it may suspend benefits under the Agreement proportionate to the trade effects which the measure in question causes or threatens to cause. Moreover, Armenia shall repeal its compensatory measure to the extent that the UAE's measure in question ceases to apply. The above-mentioned procedure shall also apply in case of any dispute relating to whether Armenia's compensatory measure is proportionate, with the UAE likewise ultimately having the right to suspend benefits proportionately.

(e) The UAE and Armenia further agree that this Annex shall constitute an integral part of the Agreement and that, in the unlikely event of any inconsistency between this Annex and any provisions of the Agreement, this Annex shall prevail to the extent of that inconsistency.

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Նախաբան**
**Գլուխ 1.** Նախնական դրույթներ և ընդհանուր սահմանումներ
**Գլուխ 2.** Ծառայությունների առևտուր
**Գլուխ 3.** Ներդրումների դյուրացում
**Գլուխ 4.** Բացառություններ
**Գլուխ 5.** Վեճերի կարգավորում
**Գլուխ 6.** Համաձայնագրի կառավարում
**Գլուխ 7.** Եզրափակիչ դրույթներ
**Հավելված I.** Ծառայությունների առևտրի մասով Արաբական Միացյալ Էմիրությունների հատուկ պարտավորությունների ժամանակացանկ
**Հավելված II**. Ծառայությունների առևտրի մասով Հայաստանի Հանրապետության հատուկ պարտավորությունների ժամանակացանկ
**Հավելված III.** ԱՄԷ-ի ԱԱԲՌ բացառությունների ցանկ
**Հավելված IV.** Հայաստանի Հանրապետության ԱԱԲՌ բացառությունների ցանկ
**Հավելված V.** Ֆինանսական ծառայություններ
**Հավելված VI.** Հեռահաղորդակցության ծառայություններ
**Հավելված VII.** Կոլեգիայի ընթացակարգային կանոններ
**Հավելված VIII.** Կոլեգիայի անդամների և սույն համաձայնագրի շրջանակներում վեճերի կարգավորման վարույթներում ներգրավված այլ անձանց վարքագծի կանոնակարգ
**Հավելված IX.** Էներգետիկ ռեսուրսների ոլորտ

**ՆԱԽԱԲԱՆ**

Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ առանձին՝ Կողմ, և միասին՝ Կողմեր,

**ՁԱՆԱՉԵԼՈՎ** Արաբական Միացյալ Էմիրությունների (ԱՄԷ) և Հայաստանի Հանրապետության (ՀՀ) միջև ամուր տնտեսական և քաղաքական կապերը և ցանկանալով ամրապնդել այդ կապերը ծառայություններն ու ներդրումները ներառող ազատ առևտրի գոտի ստեղծելու միջոցով՝ այդպիսով հաստատելով սերտ և տևական հարաբերություններ,

**ԸՆԴՈՒՆԵԼՈՎ** Կողմերի փոխադարձ ցանկությունը՝ կապված ծառայությունների առևտրի, ներդրումների և առևտրին առնչվող ոլորտների վերաբերյալ համապարփակ տնտեսական համաձայնագիր կնքելու հետ,

**ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼՈՎ,** մի կողմից, Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների և, մյուս կողմից, Արաբական Միացյալ Էմիրությունների միջև ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում փոխադարձ համագործակցությունն ընդլայնելու մտադրությունը,

**ՈՐՈՇԵԼՈՎ** հիմնվել ԾԱԳՀ-ով և «Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին» Մարաքեշի համաձայնագրի այլ համապատասխան ակտերով նախատեսված իրենց համապատասխան իրավունքների ու պարտավորությունների վրա,

**ԳԻՏԱԿՑԵԼՈՎ** գլոբալացման և տեխնոլոգիական առաջընթացի հետևանքով առաջացած դինամիկ և արագ փոփոխվող գլոբալ շրջակա միջավայրի առկայությունը, որը տարբեր տնտեսական և ռազմավարական մարտահրավերներ և հնարավորություններ է Կողմերի համար,

**ՈՐՈՇԵԼՈՎ** վերացնել Կողմերի միջև ծառայությունների առևտրի և ներդրումների հետ կապված խոչընդոտները, նվազեցնել բիզնես ծախսերը, բարձրացնել տնտեսական արդյունավետությունը և ստեղծել բարենպաստ պայմաններ ավելի լայն տնտեսական համագործակցության և փոխադարձ շահերի համար,

**ՆՊԱՏԱԿ ՈՒՆԵՆԱԼՈՎ** խթանելու տեխնոլոգիայի փոխանցումը և ընդլայնելու ծառայությունների առևտուրն ու ներդրումները,

**ՀԱՄՈԶՎԱԾ ԼԻՆԵԼՈՎ,** որ ծառայությունները և ներդրումները ներառող ազատ առևտրի գոտու ստեղծումն ավելի նպաստավոր միջավայր կստեղծի Կողմերի միջև տնտեսական և առևտրային հարաբերությունները խթանելու և զարգացնելու համար,

**ՆՊԱՏԱԿ ՈՒՆԵՆԱԼՈՎ** ստեղծելու հստակ, թափանցիկ և կանխատեսելի իրավական և առևտրային դաշտ բիզնես պլանավորման համար, ինչը կնպաստի ծառայությունների առևտրի և ներդրումների հետագա ընդլայնմանը,

**ՁԱՆԱՉԵԼՈՎ** կարգավորման իրենց անկապտելի իրավունքը և վճռական լինելով պահպանելու օրենսդրական և կարգավորող առաջնահերթություններ սահմանելու և

հանրային բարեկեցության այնպիսի իրավաչափ նպատակները պաշտպանելու Կողմերի ճկունությունը, ինչպիսիք են առողջությունը, անվտանգությունը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, կենդանի կամ անկենդան սպառվող բնական պաշարների պահպանումը, ֆինանսական համակարգի ամբողջականությունն ու կայունությունը, ինչպես նաև հասարակական բարոյականությունը՝ սույն Համաձայնագրով նախատեսված իրավունքներին ու պարտավորություններին համապատասխան,

**ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ** հետևյալի մասին.

## ԳԼՈՒԽ 1
## ՆԱԽՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

### ՀՈԴՎԱԾ 1.1. Ընդհանուր սահմանումները

Սույն Համաձայնագրի նպատակներով՝

**«օրեր»** նշանակում է՝ օրացուցային օրեր՝ ներառյալ հանգստյան և ոչ աշխատանքային օրերը.

**«ԾԱԳՀ»** նշանակում է՝ Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագիր՝ ԱՀԿ համաձայնագրի 1Բ հավելվածի համաձայն.

**«Համատեղ կոմիտե»** նշանակում է՝ 6-րդ հոդվածի (Համաձայնագրի կառավարումը) համաձայն ստեղծված Համատեղ կոմիտե.

**«միջոց»** նշանակում է՝ օրենքի, կանոնակարգի, կանոնի, ընթացակարգի, որոշման, գործելակերպի, վարչարարության կամ որևէ այլ ձևով արտահայտված ցանկացած միջոց.

**«տարածք»** նշանակում է՝

ա) ԱՄԷ-ի դեպքում՝ նրա ցամաքային տարածքը, ներքին ջրերը, այդ թվում՝ ազատ գոտիները, տարածքային ծովը, ներառյալ ծովի հատակը, դրա ընդերքը, այդ տարածքների ու ջրերի վրա գտնվող օդային տարածքը, ինչպես նաև հարակից գոտին, մայրցամաքային ծանծաղուտը և բացառիկ տնտեսական գոտին, որոնց նկատմամբ ԱՄԷ-ն ունի ինքնիշխանություն, իրականացնում է ինքնիշխան իրավունքներ և իրավասություն՝ իր օրենքներով սահմանված կարգով և միջազգային իրավունքին համապատասխան, և

բ) Հայաստանի Հանրապետության դեպքում՝ նրա ցամաքային տարածքը, ներքին ջրերը, ընդերքը և դրանց վրա գտնվող օդային տարածքը, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է ինքնիշխան իրավունքներ և իրավասություն՝ իր ազգային օրենսդրությանը և միջազգային իրավունքին համապատասխան.

**«ԱՀԿ»** նշանակում է՝ Առևտրի համաշխարհային կազմակերպություն, և

**«ԱՀԿ համաձայնագիր»** նշանակում է՝ «Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին» Մարաքեշի համաձայնագիր՝ ստորագրված 1994 թվականի ապրիլի 15-ին՝ Մարաքեշում:

**ՀՈԴՎԱԾ 1.2. Ազատ առևտրի գոտու ստեղծումը**

Սույնով Կողմերը ստեղծում են ծառայությունները և ներդրումները ներառող ազատ առևտրի գոտի՝ Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրի **(ԾԱԳՀ)** V հոդվածին համապատասխան:

**ՀՈԴՎԱԾ 1.3. Նպատակը**

Սույն Համաձայնագրի նպատակն է ազատականացնել և դյուրացնել Կողմերի միջև ծառայությունների առևտուրը և ներդրումները՝ սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

**ՀՈԴՎԱԾ 1.4. Այլ համաձայնագրերի հետ կապը**

1. Կողմերը հաստատում են միմյանց նկատմամբ իրենց առկա իրավունքներն ու պարտավորությունները՝ ԱՀԿ համաձայնագրի և այլ համաձայնագրերի համաձայն, որոնց կողմ են երկու Կողմերն էլ:

2. Սույն Համաձայնագրի և այլ համաձայնագրերի միջև, որոնց կողմ են երկու Կողմերն էլ, որևէ անհամապատասխանության դեպքում Կողմերն անհապաղ խորհրդակցում են միմյանց հետ՝ երկուստեք բավարարող լուծում գտնելու նպատակով:

**ՀՈԴՎԱԾ 1.5. Պարտավորությունների շրջանակը**

1. Սույն Համաձայնագրին համապատասխան ստանձնած իր պարտավորություններն ու հանձնառությունները կատարելիս յուրաքանչյուր Կողմ ձեռնարկում է այնպիսի ողջամիտ միջոցներ, որոնք կարող են իրեն հասանելի լինել՝ իր տարածքներում պետական և տեղական կառավարությունների ու մարմինների և ոչ պետական մարմինների կողմից դրանց կատարումն ապահովելու համար՝ ներքին օրենսդրությանը և Կողմերի կանոնակարգերին համապատասխան:

2. Սույն դրույթը պետք է մեկնաբանվի և կիրառվի ԾԱԳՀ-ի I հոդվածի 3-րդ կետով սահմանված սկզբունքներին համապատասխան:

**ՀՈԴՎԱԾ 1.6. Թափանցիկությունը**

1. Յուրաքանչյուր Կողմ հրապարակում կամ այլ կերպ հանրայնացնում է իր այն օրենքները, կանոնակարգերը, ինչպես նաև իր համապատասխան միջազգային համաձայնագրերը, որոնք կարող են ազդել սույն Համաձայնագրի գործողության վրա:

2. Չհակասելով 1.7 հոդվածին՝ յուրաքանչյուր Կողմ ողջամիտ ժամկետում պատասխանում է կոնկրետ հարցերի և պահանջի դեպքում մյուսին տրամադրում է տեղեկություններ 1-ին պարբերության մեջ նշված հարցերի վերաբերյալ:

**ՀՈԴՎԱԾ 1.7. Գաղտնի տեղեկությունները**

1. Յուրաքանչյուր Կողմ, իր օրենքներին և կանոնակարգերին համապատասխան, պահպանում է մյուս Կողմի կողմից որպես գաղտնի սահմանված տեղեկությունների գաղտնիությունը:

2. Սույն Համաձայնագրի որևէ դրույթով չի կարող նախատեսվել Կողմի կողմից այնպիսի գաղտնի տեղեկություններ հրապարակելու պահանջ, որոնց հրապարակումը

կխոչընդոտի Կողմի օրենքի կատարման ապահովումը կամ որևէ այլ կերպ կիակասի հանրային շահին, կամ ինչը կարող է սահմանափակել որևէ տնտեսավարող սուբյեկտի իրավաչափ առևտրային շահերը:

## ԳԼՈՒԽ 2
## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ

### ՀՈԴՎԱԾ 2.1. Սահմանումները

Սույն գլխի նպատակներով՝

**«պետական իշխանության լիազորություններն իրականացնելիս մատուցվող ծառայություն»** նշանակում է՝ ցանկացած ծառայություն, որը մատուցվում է ոչ առևտրային հիմունքներով և ոչ էլ մրցակցության մեջ մտնելով մեկ կամ մի քանի ծառայություն մատուցողների հետ.

**«օդանավի վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ»** նշանակում է՝ այն գործողությունները, որոնք իրականացվում են օդանավի կամ դրա մի մասի նկատմամբ, երբ այն դուրս է բերված շահագործումից և չի ներառում, այսպես կոչված, ընթացիկ տեխնիկական սպասարկում.

**«առևտրային ներկայություն»** նշանակում է՝ ցանկացած տեսակի բիզնես կամ մասնագիտական հաստատություն, այդ թվում՝ ծառայություն մատուցելու նպատակով Կողմի պետության տարածքում՝

ա) իրավաբանական անձ հիմնադրելու, ձեռք բերելու կամ պահպանելու միջոցով, կամ

բ) մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ստեղծելու կամ պահպանելու միջոցով.

**«համակարգչային ամրագրման համակարգերի ծառայություններ»** նշանակում է՝ ավիափոխադրողների չվացուցակների, հասանելիության, վճարների և վճարային կանոնների մասին տեղեկություններ պարունակող ավտոմատացված համակարգերի միջոցով մատուցվող ծառայություններ, որոնց միջոցով կարելի է ամրագրումներ կատարել կամ տոմսեր տրամադրել.

**«իրավաբանական անձ»** նշանակում է՝ կիրառելի իրավունքի համաձայն պատշաճորեն հիմնադրված կամ այլ կերպ կազմավորված կազմակերպություն, որը հետապնդում է շահույթ ստանալու նպատակ կամ այդպիսի նպատակ չի հետապնդում, մասնավոր կամ պետական սեփականություն է, այդ թվում՝ ցանկացած կորպորացիա, վստահության վրա հիմնված ընկերակցություն/հիմնադրամ, գործընկերություն, համատեղ ձեռնարկություն, անհատ ձեռնարկատեր կամ ասոցիացիա.

**«մյուս Կողմի իրավաբանական անձ»** նշանակում է՝ իրավաբանական անձ, որը՝

ա) հիմնադրվել կամ այլ կերպ կազմավորվել է այդ մյուս Կողմի իրավունքի համաձայն և զբաղվում է հիմնական ձեռնարկատիրական գործունեությամբ՝

i) այդ Կողմի պետության տարածքում, կամ

ii) ԱՀԿ-ի ցանկացած անդամի տարածքում, և որը պատկանում է այդ մյուս Կողմի ֆիզիկական անձանց կամ այն իրավաբանական անձանց կամ վերահսկվում է նրանց կողմից, որոնք համապատասխանում են (ա)(i) ենթապարբերության

պայմաններին, կամ

բ) առևտրային ներկայության միջոցով ծառայություն մատուցելու դեպքում պատկանում է հետևյալ անձանց կամ վերահսկվում է նրանց կողմից.

i) այդ Կողմի ֆիզիկական անձինք, կամ

ii) «ա» ենթապարբերությունում նշված՝ այդ մյուս Կողմի իրավաբանական անձինք.

**«իրավաբանական անձը»՝**

ա) «պատկանում է» որևէ Կողմի անձանց, եթե դրանում սեփական միջոցների 50 տոկոսից ավելի մասնաբաժինն օգտառու կերպով պատկանում է այդ Կողմի անձանց.

բ) «վերահսկվում է» որևէ Կողմի անձանց կողմից, եթե այդ անձինք իրավասու են նշանակել դրա տնօրենների մեծամասնությանը կամ այլ կերպ օրինականորեն ուղղորդել դրա գործողությունները, կամ

գ) «փոխկապակցված» է մեկ այլ անձի հետ, եթե այն վերահսկում է այդ անձին կամ վերահսկվում է նրա կողմից, կամ եթե այն և մյուս անձը երկուսն էլ վերահսկվում են միևնույն անձի կողմից.

**«Կողմերի կողմից իրականացված միջոցներ»** նշանակում է՝ միջոցներ, որոնք ձեռնարկվել են՝

ա) կենտրոնական, տարածաշրջանային կամ տեղական կառավարությունների ու մարմինների կողմից, և

բ) ոչ պետական մարմինների կողմից՝ կենտրոնական, տարածաշրջանային կամ տեղական կառավարությունների կամ մարմինների կողմից պատվիրակված լիազորություններն իրականացնելիս.

**«ծառայությունների առևտրին վերաբերող՝ Կողմերի կողմից իրականացված միջոցները»** ներառում են՝

ա) ծառայություն ձեռք բերելու, ծառայության դիմաց վճարելու կամ ծառայությունից օգտվելու առումով իրականացվող միջոցները.

բ) ծառայության մատուցման հետ կապված այն **ծառայությունների** մատչելիության և դրանցից օգտվելու առումով իրականացվող միջոցները, որոնք Կողմն ընդհանուր առմամբ պետք է առաջարկի հանրությանը, և

գ) Կողմի անձանց ներկայությունը, այդ թվում՝ առևտրային ներկայությունը՝ մյուս Կողմի պետության տարածքում ծառայություն մատուցելու համար.

**«մենաշնորհ ունեցող ծառայություն մատուցող»** նշանակում է՝ ցանկացած անձ՝ պետական կամ մասնավոր, որին Կողմի պետության տարածքի համապատասխան շուկայում այդ Կողմի կողմից թույլատրված է գործելու, կամ որը պաշտոնապես հիմնադրված է կամ գործում է որպես այդ ծառայության միակ մատուցող.

**«մյուս Կողմի ֆիզիկական անձ»** նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության կամ ԱՄԷ-ի քաղաքացի կամ մշտական ռեզիդենտ[1].

**«անձ»** նշանակում է՝ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ.

**«ծառայության ոլորտ»** նշանակում է՝

---

[1] ԱՄԷ-ի դեպքում «մշտական ռեզիդենտ» եզրույթը նշանակում է՝ ցանկացած ֆիզիկական անձ, որն ունի վավեր կացության թույլտվություն՝ ԱՄԷ-ի օրենքների և կանոնակարգերի համաձայն:

ա) հատուկ պարտավորությունների մասով՝ այդ ծառայության մեկ կամ մի քանի կամ բոլոր ենթաոլորտներ, ինչպես նշված է Կողմի ժամանակացանկում, կամ

բ) այլ դեպքերում՝ այդ ծառայության ամբողջ ոլորտը՝ ներառյալ դրա բոլոր ենթաոլորտները.

**«օդային փոխադրման ծառայությունների վաճառք և շուկայահանում»** նշանակում է՝ հնարավորություններ տվյալ օդային փոխադրումներ իրականացնողի համար՝ վաճառելու կամ ազատորեն շուկայահանելու օդային փոխադրումների մասով իր առաջարկած ծառայությունները, ներառյալ շուկայահանման բոլոր ոլորտները, ինչպես, օրինակ՝ շուկայի հետազոտությունը, գովազդը և բաշխումը: Այս գործողությունները չեն ներառում օդային փոխադրումների ծառայությունների ո՛չ գների որոշման, ո՛չ էլ կիրառելի պայմանների սահմանման գործընթացները.

**«ծառայությունները»** ներառում են ցանկացած ոլորտում մատուցվող ցանկացած ծառայություն՝ բացառությամբ այն ծառայությունների, որոնք մատուցվում են պետական իշխանության լիազորություններ իրականացնելիս.

**«ծառայություն սպառող»** նշանակում է՝ ծառայություն ստացող կամ ծառայությունից օգտվող ցանկացած անձ.

**«մյուս Կողմի ծառայություն»** նշանակում է՝ ծառայություն, որը մատուցվում է՝

ա) այդ մյուս Կողմի պետության տարածքից կամ տարածքում կամ ծովային տրանսպորտի դեպքում՝ այդ մյուս Կողմի օրենքների համաձայն գրանցված նավով կամ այդ մյուս Կողմի անձի կողմից, որը ծառայություն է մատուցում նավի լրիվ կամ մասնակի շահագործմամբ և (կամ) դրա օգտագործմամբ, կամ

բ) առևտրային ներկայության կամ ֆիզիկական անձանց ներկայության միջոցով ծառայություն մատուցելու դեպքում՝ այդ մյուս Կողմի ծառայություն մատուցողի կողմից.

**«ծառայություն մատուցող»** նշանակում է՝ ցանկացած անձ, որը ցանկանում է մատուցել կամ մատուցում է ծառայություն[2].

**«ծառայության մատուցումը»** ներառում է ծառայության արտադրությունը, բաշխումը, շուկայահանումը, վաճառքը և առաքումը.

**«ծառայությունների վաճառքը»** սահմանվում է որպես ծառայության մատակարարում՝

ա) մի Կողմի պետության տարածքից մյուս Կողմի պետության տարածք,

բ) մի Կողմի պետության տարածքում մյուս Կողմի պետության ծառայության սպառողին,

գ) Կողմի ծառայություն մատուցողի կողմից՝ մյուս Կողմի պետության

[2] Այն դեպքում, երբ ծառայությունն ուղղակիորեն չի մատուցվում իրավաբանական անձի կողմից, այլ մատուցվում է առևտրային ներկայության այլ ձևերի միջոցով, ինչպես, օրինակ՝ մասնաճյուղը կամ ներկայացուցչությունը, ապա ծառայություն մատուցողի (այսինքն՝ իրավաբանական անձի) նկատմամբ, այնուամենայնիվ, այդպիսի ներկայության միջոցով կիրառվում է ծառայություն մատուցողների համար սույն գլխի համաձայն նախատեսված ռեժիմը: Այդ ռեժիմը տարածվում է այն ներկայության վրա, որի միջոցով ծառայությունը մատուցվում է և չպետք է տարածվի այն տարածքից դուրս գտնվող ծառայություն մատուցողի ցանկացած այլ հատվածի վրա, որտեղ ծառայությունը մատուցվում է:

տարածքում գտնվող առևտրային ներկայության միջոցով,

դ) Կողմի ծառայություն մատուցողի կողմից՝ մյուս Կողմի պետության տարածքում գտնվող՝ Կողմի ֆիզիկական անձանց ներկայության միջոցով.

**«երթևեկության իրավունքներ»** նշանակում է՝ իրավունք՝ վարձատրության դիմաց կամ վարձույթով մատուցելու և (կամ) իրականացնելու Կողմի պետության տարածքից, դեպի Կողմի պետության տարածք, Կողմի պետության տարածքի ներսում կամ Կողմի պետության տարածքով ուղևորների, բեռների և փոստի փոխադրման կանոնավոր և ոչ կանոնավոր ծառայություններ՝ ներառյալ սպասարկվող կետերը, երթուղիները, որոնք պետք է շահագործվեն, իրականացվող երթևեկության տեսակները, տրամադրվող արտադրական ներուժը, գանձվող սակագները և դրանց պայմանները և ավիաընկերությունների նշանակման չափորոշիչները, այդ թվում՝ այնպիսի չափորոշիչներ, ինչպիսիք են համարը, սեփականության իրավունքը և վերահսկողությունը:

### ՀՈԴՎԱԾ 2.2. Գործողության ոլորտը և կարգավորման շրջանակը

1. Սույն գլուխը կիրառվում է Կողմերի իրականացրած այն միջոցների նկատմամբ, որոնք վերաբերում են ծառայությունների առևտրին:

2. Սույն գլուխը չի կիրառվում հետևյալի նկատմամբ.

ա) օրենքներ, կանոնակարգեր կամ պահանջներ, որոնք կարգավորում են պետական գերատեսչությունների կողմից պետական նպատակներով, այլ ոչ առևտրային վերավաճառքի կամ առևտրային վաճառքի համար ծառայությունների մատուցման մեջ օգտագործելու նպատակով գնված ծառայությունների գնման գործընթացը.

բ) Կառավարության իրավասությունների իրականացման շրջանակներում մատուցվող ծառայություններ.

գ) Կողմի կողմից տրամադրվող սուբսիդիաներ կամ դրամաշնորհներ, այդ թվում՝ պետության օժանդակությամբ տրամադրվող վարկերը, երաշխիքները և ապահովագրությունը. և

դ) որևէ Կողմի ֆիզիկական անձանց կողմից մյուս Կողմի աշխատաշուկա մուտք գործելուն կամ քաղաքացիությանը, մշտական հիմունքներով բնակությանը կամ զբաղվածությանը վերաբերող միջոցներ:

Սույն գլխով որևէ Կողմի չի արգելվում միջոցներ կիրառել՝ կարգավորելու համար ֆիզիկական անձանց մուտքն իր տարածք կամ նրանց ժամանակավոր կացությունն իր տարածքում, այդ թվում՝ այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են իր սահմանների ամբողջականությունը պահպանելու և իր սահմաններով ֆիզիկական անձանց պատշաճ տեղաշարժն ապահովելու համար՝ պայմանով, որ այդ միջոցները չեն կիրառվում որևէ հատուկ պարտավորության շրջանակներում մյուս Կողմի կողմից ձեռք բերվող օգուտները վերացնելու կամ նվազեցնելու ձևով[3].

ե) օդային երթևեկության իրավունքներին առնչվող միջոցներ կամ օդային

[3] Կոնկրետ երկրի և ոչ մյուս երկրների ֆիզիկական անձանց համար վիզա պահանջելու փաստն ինքնին չպետք է դիտարկվի որպես օգուտների վերացում կամ նվազեցում հատուկ պարտավորության շրջանակներում:

երթևեկության իրավունքների իրացման հետ ուղղակիորեն կապված ծառայություններին առնչվող միջոցներ՝ բացի այն միջոցներից, որոնք առնչվում են՝

i) օդանավի վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններին,

ii) օդային փոխադրման ծառայությունների վաճառքին և շուկայահանմանը,

iii) համակարգչային ամրագրման համակարգերի ծառայություններին,

iv) օդանավակայանի շահագործման և կառավարման ծառայություններին, կամ

v) վերգետնյա սպասարկման ծառայություններին:

**ՀՈԴՎԱԾ 2.3. Հատուկ պարտավորությունների ժամանակացանկերը**

1. Յուրաքանչյուր Կողմ իր Հատուկ պարտավորությունների ժամանակացանկում սահմանում է իր կողմից 2.5, 2.6 և 2.7 հոդվածներին համապատասխան ստանձնած հատուկ պարտավորությունները:

2. Այն ոլորտների առնչությամբ, որտեղ նման պարտավորություններ են ստանձնվում, Հատուկ պարտավորությունների յուրաքանչյուր ժամանակացանկում նշվում է՝

ա) շուկա մուտք գործելու ժամկետները, սահմանափակումները և պայմանները.

բ) ազգային ռեժիմի պայմանները և որակավորումները.

գ) լրացուցիչ պարտավորություններին վերաբերող երաշխիքները.

դ) ըստ անհրաժեշտության՝ այդ պարտավորությունների կատարման ժամկետները, և

ե) այդ պարտավորություններն ուժի մեջ մտնելու ամսաթիվը:

3. 2.5 և 2.6 հոդվածներին չհամապատասխանող միջոցներն ամրագրվում են 2.5 հոդվածին վերաբերող սյունակում: Այս դեպքում ամրագրումը կհամարվի նաև 2.6 հոդվածի պայման կամ որակավորում:

4. Կողմերի Հատուկ պարտավորությունների ժամանակացանկերը սահմանվում են 2.17 հոդվածում ներկայացված I հավելվածում (Ծառայությունների առևտրի մասով ԱՄԷ հատուկ պարտավորությունների ժամանակացանկ) և II հավելվածում (Ծառայությունների առևտրի մասով Հայաստանի Հանրապետության հատուկ պարտավորությունների ժամանակացանկ):

**ՀՈԴՎԱԾ 2.4. Ազգերի առավել բարենպաստության ռեժիմ**

1. Բացառությամբ III հավելվածում (ԱՄԷ-ի ԱԱԲՌ բացառությունների ցանկ) և IV հավելվածում (Հայաստանի Հանրապետության ԱԱԲՌ բացառությունների ցանկ) պարունակվող՝ իր ԱԱԲՌ բացառությունների ցանկով նախատեսված դեպքերի՝ Կողմն անմիջապես և անվերապահորեն ծառայությունների մատուցմանն առնչվող բոլոր միջոցների առնչությամբ մյուս Կողմի ծառայություններին ու ծառայություն մատուցողներին տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որն ինքը տրամադրում է կողմ չհանդիսացող ցանկացած պետության համանման ծառայություններին և ծառայություն մատուցողներին:

2. 1-ին պարբերությամբ նախատեսված պարտավորությունները չեն կիրառվում հետևյալի նկատմամբ.

ա) Կողմերից մեկի կողմից կնքված այլ գործող կամ ապագա համաձայնագրերի համաձայն տրամադրված և ԾԱԳՀ-ի V կամ V bis հոդվածներով ծանուցված ռեժիմ, ինչպես նաև ԾԱԳՀ-ի VII հոդվածի համաձայն տրամադրված ռեժիմ կամ ողջամիտ միջոցներ՝ ԾԱԳՀ-ի Ֆինանսական ծառայությունների մասին հավելվածին համապատասխան.

բ) ՆԱՄԷ-ի կողմից Ծոցի համագործակցության խորհրդի անդամ պետությունների ծառայություններին և ծառայություն մատուցողներին Ծոցի համագործակցության խորհրդի տնտեսական համաձայնագրի համաձայն տրամադրվող ռեժիմ և ԱՄԷ-ի կողմից Մեծ արաբական ազատ առևտրի գոտու (ՄԱԱԱԳ) շրջանակներում տրամադրվող ռեժիմ:

3. Հարակից երկրներին տրամադրվող առավելությունների մասով Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները կարգավորվում են ԾԱԳՀ-ի II հոդվածի 3-րդ պարբերությամբ, որը սույնով ներառվում է սույն Համաձայնագրում և վերջինիս մասն է կազմում:

**ՀՈԴՎԱԾ 2.5. Շուկայի հասանելիությունը**

1. Յուրաքանչյուր Կողմ 2.1 հոդվածում պարունակվող «ծառայությունների առևտուր» սահմանման մեջ նշված մատուցման եղանակների միջոցով շուկայի հասանելիության առնչությամբ մյուս Կողմի ծառայությունների և ծառայություն մատուցողների նկատմամբ կիրառում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը նախատեսված է Հատուկ պարտավորությունների իր ժամանակացանկում համաձայնեցված և նշված ժամկետներով, սահմանափակումներով ու պայմաններով[4]:

2. Այն ոլորտներում, որտեղ շուկայի հասանելիության մասով պարտավորություններ են ստանձնվել, միջոցները, որոնք Կողմը չպետք է պահպանի կամ ընդունի ոչ տարածքային ստորաբաժանման և ոչ էլ իր ամբողջ տարածքի հիմունքով, սահմանվում են հետևյալ կերպ, եթե այլ բան սահմանված չէ Հատուկ պարտավորությունների իր ժամանակացանկում.

ա) ծառայություն մատուցողների թվի սահմանափակումներ, լինի քանակական քվոտաների, մենաշնորհների, ծառայության բացառիկ մատուցողների, թե տնտեսական անհրաժեշտության ստուգման պահանջների ձևով,

բ) ծառայությանը վերաբերող գործառնությունների կամ ակտիվների ընդհանուր արժեքի սահմանափակումներ՝ քանակական քվոտաների կամ տնտեսական անհրաժեշտության ստուգման պահանջի ձևով,

գ) ծառայությանը վերաբերող գործողությունների ընդհանուր թվի կամ

---

[4] Եթե որևէ Կողմ շուկայի հասանելիության մասով պարտավորություն է ստանձնում 2.1 հոդվածի (i) պարբերության մեջ պարունակվող «ծառայությունների առևտուր» սահմանման մեջ նշված մատուցման եղանակի միջոցով ծառայության մատուցման կապակցությամբ, և եթե կապիտալի միջսահմանային տեղաշարժն ինքնին ծառայության էական մաս է, ապա այդ Կողմը դրանով պարտավոր է թույլատրել կապիտալի այդպիսի տեղաշարժը: Եթե Կողմը շուկայի հասանելիության մասով պարտավորություն է ստանձնում 2.1 հոդվածի (iii) պարբերության մեջ պարունակվող «ծառայությունների առևտուր» սահմանման մեջ նշված մատուցման եղանակով ծառայություն մատուցելու առնչությամբ, ապա նա դրանով պարտավորվում է թույլ տալ կապիտալի հարակից փոխանցումները դեպի իր տարածք:

ծառայության արդյունքի՝ հատկորոշված թվային միավորներով արտահայտած ընդհանուր քանակի սահմանափակումներ՝ քվոտաների կամ տնտեսական անհրաժեշտության ստուգման պահանջի ձևով[5],

դ) այն ֆիզիկական անձանց ընդհանուր թվի սահմանափակումներ, որոնք կարող են աշխատանքի անցնել ծառայության որոշակի ոլորտում, կամ որոնց կարող է աշխատանքի վերցնել որևէ ծառայություն մատուցող, և որոնք անհրաժեշտ են կոնկրետ ծառայության մատուցման համար և դրանց հետ ուղղակիորեն կապված են քանակական քվոտաների կամ տնտեսական անհրաժեշտության ստուգման պահանջների ձևով,

ե) միջոցներ, որոնցով սահմանափակվում կամ պահանջվում են իրավաբանական անձի կամ համատեղ ձեռնարկության որոշակի տեսակներ, որոնց միջոցով ծառայություն մատուցողը կարող է մատուցել ծառայություն, և

զ) օտարերկրյա կապիտալի մասնակցության սահմանափակումներ բաժնետիրական կապիտալում օտարերկրյա մասնակցության առավելագույն տոկոսային սահմանաչափի կամ առանձին կամ համախառն օտարերկրյա ներդրումների ընդհանուր արժեքի առումով:

**ՀՈԴՎԱԾ 2.6. Ազգային ռեժիմը**

1. Հատուկ պարտավորությունների իր ժամանակացանկում ներառված ծառայությունների ոլորտների կապակցությամբ և հաշվի առնելով դրանում սահմանված ցանկացած պայման ու վերապահում՝ յուրաքանչյուր Կողմ ծառայությունների մատուցմանն առնչվող բոլոր միջոցների առնչությամբ մյուս Կողմի ծառայություններին ու ծառայություն մատուցողներին տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որն ինքը տրամադրում է իր սեփական համանման ծառայություններին և ծառայություն մատուցողներին[6]:

2. Կողմը կարող է բավարարել 1-ին պարբերության պահանջը՝ մյուս Կողմի ծառայություններին և ծառայություն մատուցողներին տրամադրելով ֆորմալ առումով նույնական կամ ֆորմալ առումով տարբեր ռեժիմ՝ համեմատած այն ռեժիմի հետ, որն ինքը տրամադրում է իր սեփական համանման ծառայություններին և ծառայություն մատուցողներին:

3. Կողմի կողմից իրականացվող ֆորմալ առումով նույնական կամ ֆորմալ առումով տարբերվող ռեժիմը համարվում է պակաս բարենպաստ, եթե այն փոփոխում է մրցակցության պայմանները հօգուտ այդ Կողմի ծառայությունների և ծառայություն մատուցողների՝ համեմատած մյուս Կողմի համանման ծառայության և ծառայություն մատուցողների հետ:

---

[5] 2(գ) ենթապարբերությամբ չեն կարգավորվում Կողմի այն միջոցները, որոնցով սահմանափակվում են ծառայությունների մատուցման ծախսերը:

[6] Սույն հոդվածի համաձայն ստանձնած հատուկ պարտավորությունները չպետք է մեկնաբանվեն այնպես, որ որևէ Կողմից պահանջվի փոխհատուցել մրցակցային որևէ ներհատուկ անբարենպաստ պայմանի համար, որն առաջացել է համապատասխան ծառայությունների կամ ծառայություն մատուցողների օտարերկրյա լինելու հետևանքով:

**ՀՈԴՎԱԾ 2.7. Լրացուցիչ պարտավորություններ**

Կողմերը կարող են բանակցել այն ծառայությունների առևտրին առնչվող միջոցների հետ կապված պարտավորությունների վերաբերյալ, որոնք ենթակա չեն պլանավորման 2.5 և 2.6 հոդվածներով նախատեսված կարգով, ներառյալ այն պարտավորությունները, որոնք վերաբերում են որակավորման, ստանդարտների կամ լիցենզավորման հարցերին: Նման պարտավորություններն ամրագրվում են այդ Կողմի Հատուկ պարտավորությունների ժամանակացանկում:

**ՀՈԴՎԱԾ 2.8. Ժամանակացանկերում փոփոխություններ կատարելը**

Կողմերից մեկի գրավոր պահանջով Կողմերն անցկացնում են խորհրդակցություններ՝ քննարկելու պահանջ ներկայացնող Կողմի Հատուկ պարտավորությունների ժամանակացանկում որևէ հատուկ պարտավորության փոփոխություն կամ վերացում: Խորհրդակցություններն անցկացվում են պահանջ ներկայացնող Կողմի կողմից իր պահանջը ներկայացնելուց հետո երեք ամսվա ընթացքում: Խորհրդակցությունների ընթացքում Կողմերը նպատակ են հետապնդում ապահովելու, որ փոխշահավետ այն պարտավորությունների ընդհանուր մակարդակը, որոնք առևտրի համար ոչ պակաս նպաստավոր են, քան Հատուկ պարտավորությունների ժամանակացանկով նախատեսվածները, մինչև այդպիսի խորհրդակցությունները պահպանվի: Ժամանակացանկերում փոփոխությունների կատարումը կարգավորվում է 6-րդ գլխի (Համաձայնագրի կառավարումը) համաձայն ստեղծված Համատեղ կոմիտեի կողմից ընդունված ընթացակարգերով:

**ՀՈԴՎԱԾ 2.9. Ներպետական կարգավորումը**

1. Այն ոլորտներում, որոնց հետ կապված ստանձնվել են հատուկ պարտավորություններ, յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ծառայությունների առևտրին վերաբերող ընդհանուր կիրառության բոլոր միջոցները կառավարվեն ողջամիտ, օբյեկտիվ և անաչառ ձևով:

2.

ա) Յուրաքանչյուր Կողմ պահպանում կամ հնարավորինս շուտ ստեղծում է դատական, արբիտրաժային կամ վարչական տրիբունալներ կամ ընթացակարգեր, որոնք ազդեցության ենթարկված ծառայություն մատուցողի պահանջով ապահովում են ծառայությունների առևտրին առնչվող վարչական որոշումների արագ վերանայում և հիմնավորված լինելու դեպքում՝ իրավական պաշտպանության համապատասխան միջոցներ: Եթե այդպիսի ընթացակարգերն անկախ չեն այն մարմնից, որին վերապահված է նշված վարչական որոշումը, ապա Կողմն ապահովում է, որ ընթացակարգերը փաստացի նախատեսեն օբյեկտիվ և անկողմնակալ վերանայում:

բ) «ա» ենթապարբերության դրույթները չեն մեկնաբանվում այնպես, որ Կողմից պահանջվի ստեղծել այդպիսի տրիբունալներ կամ ընթացակարգեր, եթե դա հակասում է իր սահմանադրական կառուցակարգին կամ իրավական համակարգի բնույթին:

3. Այն դեպքում, երբ թույլտվություն է պահանջվում մատուցելու այնպիսի ծառայություն, որի վերաբերյալ սույն գլխի համաձայն հատուկ պարտավորություն է

ստանձնվել, յուրաքանչյուր Կողմի իրավասու մարմինները՝

ա) ներպետական օրենքներով և կանոնակարգերով լիարժեք համարվող դիմում ներկայացնելուց հետո ողջամիտ ժամկետում տեղեկացնում են դիմումատուին դիմումի վերաբերյալ որոշման մասին.

բ) ոչ լիարժեք դիմումի դեպքում դիմումատուի պահանջով նշում են բոլոր այն լրացուցիչ տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են դիմումը լրացնելու համար, և հնարավորություն են տալիս ողջամիտ ժամկետում շտկելու թերությունները.

գ) դիմումատուի պահանջով, առանց անհարկի ուշացման, տեղեկություն են տրամադրում դիմումի կարգավիճակի վերաբերյալ, և

դ) եթե դիմումը կարճվում կամ մերժվում է, ապա հնարավորության սահմաններում գրավոր և անհապաղ տեղեկացնում են դիմողին նման գործողության պատճառների մասին: Դիմողը հնարավորություն կունենա իր հայեցողությամբ նոր դիմում ներկայացնելու:

4. Նպատակ ունենալով ապահովելու, որ որակավորման պահանջներին և ընթացակարգերին առնչվող միջոցները, տեխնիկական ստանդարտները և լիցենզավորման պահանջները ծառայությունների առևտրի համար չստեղծեն անհարկի խոչընդոտներ, Կողմերը փորձում են ապահովել, որ այն ոլորտներում, որտեղ հատուկ պարտավորություններ են ստանձնվել, այդ միջոցները՝

ա) հիմնված լինեն օբյեկտիվ և թափանցիկ չափորոշիչների վրա, ինչպիսիք են ծառայություն մատուցելու իրավասությունը և կարողությունը.

բ) չլինեն պարտավորություններով ավելի ծանրաբեռնող, քան անհրաժեշտ է ծառայության որակն ապահովելու համար, և

գ) լիցենզավորման ընթացակարգերի դեպքում որպես այդպիսին չսահմանափակեն ծառայության մատուցումը:

5. Որոշելու համար, թե արդյոք Կողմը կատարում է 4-րդ ենթապարբերությունով նախատեսված պարտավորությունը, հաշվի են առնվում այդ Կողմի կողմից կիրառվող՝ համապատասխան միջազգային կազմակերպությունների միջազգային ստանդարտները[7]:

6. Այն ոլորտներում, որտեղ մասնագիտական ծառայությունների վերաբերյալ հատուկ պարտավորություններ են ստանձնվել, յուրաքանչյուր Կողմ նախատեսում է համապատասխան ընթացակարգեր՝ մյուս Կողմի մասնագետների կոմպետենտությունը ստուգելու համար:

7. Կողմերը համատեղ ուսումնասիրում են ներպետական կարգավորման կանոնների շուրջ բանակցությունների արդյունքները՝ համաձայն ԾԱԳՀ-ի VI.4 հոդվածի՝ դրանք սույն գլխում ներառելու նպատակով:

**ՀՈԴՎԱԾ 2.10. Ճանաչումը**

1. Ծառայություն մատուցողներին թույլտվություն տրամադրելու, նրանց

[7] «Համապատասխան միջազգային կազմակերպություններ» եզրույթը վերաբերում է այն միջազգային մարմիններին, որոնց անդամակցությունը բաց է սույն Համաձայնագրի Կողմերի համապատասխան մարմինների համար:

լիցենզավորման կամ հավաստագրման ստանդարտների կամ չափորոշիչների ամբողջությամբ կամ մասնակի կատարման նպատակով և 3-րդ պարբերությանը համապատասխան՝ Կողմը կարող է ճանաչել կամ խրախուսել իր համապատասխան իրավասու մարմիններին ճանաչելու մյուս Կողմում ստացած կրթությունը կամ փորձը, կատարված պահանջները կամ տրամադրված լիցենզիաները կամ հավաստագրերը: Այդ ճանաչումը, որին կարելի է հասնել ներդաշնակեցման կամ այլ ձևով, կարող է հիմնված լինել Կողմերի կամ նրանց համապատասխան իրավասու մարմինների միջև համաձայնության կամ պայմանավորվածության վրա կամ կարող է համաձայնեցվել ինքնուրույն կերպով:

2. Այն դեպքում, երբ Կողմը համաձայնությամբ կամ պայմանավորվածությամբ ճանաչում է կողմ չհանդիսացող պետության տարածքում ստացած կրթությունը կամ փորձը, կատարված պահանջները կամ տրված լիցենզիաները կամ հավաստագրերը, այդ Կողմը մյուս Կողմին ընձեռում է պատշաճ հնարավորություն՝ բանակցելու գոյություն ունեցող կամ ապագա նման համաձայնությանը կամ պայմանավորվածությանն իր միանալու վերաբերյալ կամ բանակցելու այդ պետության հետ համադրելի համաձայնություն կամ պայմանավորվածություն ձեռք բերելու վերաբերյալ: Այն դեպքում, երբ Կողմն ինքնուրույն է համաձայնում ճանաչմանը, ապա այն համարժեք հնարավորություններ է ապահովում մյուս Կողմի համար՝ ցույց տալու, որ այդ մյուս Կողմի պետության տարածքում ստացած կրթությունը, փորձը, լիցենզիաները կամ հավաստագրերը կամ կատարված պահանջները պետք է նույնպես ճանաչվեն:

3. Կողմը չի համաձայնում ճանաչմանն այնպիսի ձևով, որը կհամարվի մյուս Կողմի և կողմ չհանդիսացող պետությունների միջև խտրական միջոց՝ ծառայություն մատուցողներին թույլտվություն տրամադրելու, նրանց լիցենզավորման կամ հավաստագրման ստանդարտների կամ չափորոշիչների կիրառման հարցում, կամ ծառայությունների առևտրի թաքնված սահմանափակում:

4. Կողմերը համաձայնում են հնարավորության դեպքում խրախուսել իրենց պետությունների համապատասխան տարածքներում գործող համապատասխան մարմիններին, որոնք պատասխանատու են պրոֆեսիոնալ և մասնագիտական որակավորումների տրամադրման և ճանաչման համար, որ՝

ա) ամրապնդեն համագործակցությունը և ուսումնասիրեն համապատասխան պրոֆեսիոնալ և մասնագիտական որակավորումների փոխադարձ ճանաչման հնարավորությունները, և

բ) հետամուտ լինեն Կողմերի համար փոխադարձ կարևորություն ունեցող ծառայությունների ոլորտներին առնչվող լիցենզավորման և հավաստագրման փոխադարձաբար ընդունելի ստանդարտներին և չափորոշիչներին:

### ՀՈԴՎԱԾ 2.11. Վճարումները և փոխանցումները

1. Կողմը սահմանափակումներ չի կիրառում իր հատուկ պարտավորություններին վերաբերող ընթացիկ գործարքների համար կատարվող միջազգային փոխանցումների և վճարումների նկատմամբ՝ բացառությամբ 2.14 հոդվածով (Վճարային հաշվեկշռի պաշտպանության նպատակով կիրառվող սահմանափակումները) նախատեսված հանգամանքների առկայության դեպքերի:

2. Սույն գլխում որևէ դրույթ չի ազդում Կողմերի՝ որպես Արժույթի միջազգային հիմնադրամի անդամների իրավունքների և պարտավորությունների վրա, որոնք սահմանված են Հիմնադրամի համաձայնագրի հոդվածներով, ներառյալ փոխանակման գործողությունների կիրառումը, որոնք համապատասխանում են Համաձայնագրի հոդվածներին՝ պայմանով, որ Կողմը կապիտալի առնչությամբ գործարքների նկատմամբ չի սահմանում այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն համապատասխանում այդ գործարքներին վերաբերող իր հատուկ պարտավորություններին՝ բացառությամբ 2.14 հոդվածով (Վճարային հաշվեկշռի պաշտպանության նպատակով կիրառվող սահմանափակումները) նախատեսված դեպքերի կամ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից պահանջ ներկայացվելու դեպքի:

**ՀՈԴՎԱԾ 2.12. Մենաշնորհներ և ծառայություն բացառիկ մատուցողներ**

Մենաշնորհների և ծառայության բացառիկ մատուցողների մասով Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները կարգավորվում են ԾԱԳՀ-ի VIII հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ կետերով, որոնք սույնով ներառվում են սույն Համաձայնագրում և վերջինիս մասն են կազմում:

**ՀՈԴՎԱԾ 2.13. Բիզնես գործելակերպեր**

Բիզնես գործելակերպերի մասով Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները կարգավորվում են ԾԱԳՀ-ի IX հոդվածով, որը սույնով ներառվում է սույն Համաձայնագրում և վերջինիս մասն է կազմում:

**ՀՈԴՎԱԾ 2.14. Վճարային հաշվեկշռի պաշտպանության նպատակով կիրառվող սահմանափակումները**

1. Կողմերը ձգտում են խուսափել վճարային հաշվեկշռի պաշտպանության նպատակով սահմանափակումներ կիրառելուց:

2. Այն դեպքում, երբ սույն Համաձայնագրի որևէ Կողմ վճարային հաշվեկշռի և արտաքին ֆինանսական լուրջ դժվարություններ ունի կամ գտնվում է դրանց սպառնալիքի տակ, նա կարող է ընդունել կամ պահպանել սահմանափակող միջոցներ ծառայությունների առևտրի, այդ թվում՝ վճարումների և փոխանցումների առնչությամբ:

3. Նման սահմանափակումների մասով Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները կարգավորվում են ԾԱԳՀ-ի XII հոդվածի 1-ից 3-րդ կետերով, որոնք սույնով ներառվում են սույն Համաձայնագրում և վերջինիս մասն են կազմում: Կողմը, որն ընդունում կամ պահպանում է նման սահմանափակումներ կամ փոփոխում է գոյություն ունեցող սահմանափակումները, անմիջապես այդ մասին ծանուցում է Համատեղ կոմիտեին:

**ՀՈԴՎԱԾ 2.15. Արտոնությունների տրամադրումը մերժելը**

Կողմը կարող է մերժել սույն գլխի համաձայն տրամադրվող արտոնությունները ծառայություններ մատուցողին, որն իրավաբանական անձ է, եթե այդ իրավաբանական անձը պատկանում է կողմ չհանդիսացող պետության անձանց կամ վերահսկվում է

նրանց կողմից, իսկ մերժող Կողմը՝

ա) չի վարում դիվանագիտական հարաբերություններ կողմ չհանդիսացող պետության հետ, կամ

բ) ընդունում կամ պահպանում է այնպիսի միջոցներ կողմ չհանդիսացող պետության կամ կողմ չհանդիսացող պետության անձի նկատմամբ, որոնք արգելում են գործարքներն իրավաբանական անձի հետ կամ կհամարվեն խախտված կամ շրջանցված, եթե սույն Համաձայնագրի արտոնությունները տրամադրվեն իրավաբանական անձին.

Ծովային տրանսպորտի ծառայության մատուցման դեպքում, եթե այն հաստատում է, որ ծառայությունը մատուցվում է՝

ա) կողմ չհանդիսացող պետության օրենքների համաձայն գրանցված նավով, և

բ) նավն ամբողջությամբ կամ մասնակի շահագործող և (կամ) օգտագործող անձի կողմից, որը սակայն կողմ չհանդիսացող պետության անձ է:

**ՀՈԴՎԱԾ 2.16. Վերանայումը**

1. Իրենց միջև ծառայությունների առևտրի հետագա ազատականացման նպատակով Կողմերը համաձայնում են համատեղ վերանայել իրենց Հատուկ պարտավորությունների ժամանակացանկերը և իրենց ԱԱԲՌ բացառությունների ցանկերը՝ հաշվի առնելով ծառայությունների ազատականացման ցանկացած զարգացում, որը տեղի է ունենում ԱՀԿ-ի հովանավորության ներքո իրականացվող շարունակական աշխատանքի արդյունքում:

2. Առաջին այդպիսի վերանայումը տեղի է ունենում ոչ ուշ, քան սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց երկու տարի հետո:

**ՀՈԴՎԱԾ 2.17. Հավելվածները**

Հետևյալ հավելվածները կազմում են սույն գլխի անբաժանելի մասը.

- Հավելված I. Ծառայությունների առևտրի մասով ԱՄԷ հատուկ պարտավորությունների ժամանակացանկեր
- Հավելված II. Ծառայությունների առևտրի մասով Հայաստանի Հանրապետության հատուկ պարտավորությունների ժամանակացանկեր
- Հավելված III. ԱՄԷ-ի ԱԱԲՌ բացառությունների ցանկ
- Հավելված IV. Հայաստանի Հանրապետության ԱԱԲՌ բացառությունների ցանկ
- Հավելված V. Ֆինանսական ծառայություններ
- Հավելված VI. Հեռահաղորդակցության ծառայություններ

## ԳԼՈՒԽ 3
## ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԴՅՈՒՐԱՑՈՒՄԸ

**ՀՈԴՎԱԾ 3.1. Երկկողմ ներդրումային պայմանագիր**

Կողմերը նշում են 2016 թվականի հուլիսի 22-ին Երևանում Արաբական Միացյալ

Էմիրությունների Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև կնքված Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրի և դրանում կատարված ցանկացած հետագա փոփոխության (այսուհետ՝ Ներդրումների պաշտպանության մասին համաձայնագիր) առկայությունը և վերահաստատում այն:

Ներդրումների փոխադարձ պաշտպանությանն առնչվող հարաբերությունները կարգավորվում են Ներդրումների պաշտպանության մասին համաձայնագրով:

**ՀՈԴՎԱԾ 3.2. Ներդրումների խթանումը**

Կողմերը հաստատում են գրավիչ ներդրումային միջավայրը խթանելու և ապրանքների ու ծառայությունների առևտուրն ընդլայնելու իրենց ցանկությունը: Կողմերը ձեռնարկում են համապատասխան միջոցներ՝ խրախուսելու և դյուրացնելու առևտուրը և ապահովելու բարենպաստ պայմաններ՝ երկու երկրների միջև երկարաժամկետ տնտեսական զարգացման և առևտրի բազմազանեցման համար:

**ՀՈԴՎԱԾ 3.3. Տեխնիկական հարցերով խորհուրդը**

Կողմերը ստեղծում են Ներդրումների հարցերով Արաբական Միացյալ Էմիրություններ — Հայաստանի Հանրապետություն խորհուրդ (Խորհուրդ), որը կազմված կլինի երկու Կողմերի ներկայացուցիչներից: Հայաստանի Հանրապետության կողմից կնախագահի Էկոնոմիկայի նախարարությունը, իսկ Արաբական Միացյալ Էմիրությունների կողմից կնախագահի Ֆինանսների նախարարությունը: Կողմերի կողմից անհրաժեշտ համարվելու դեպքում Խորհուրդը կարող է ստեղծել աշխատանքային խմբեր:

**ՀՈԴՎԱԾ 3.4. Խորհրդի նպատակները**

Խորհրդի նպատակներն են՝

1. խթանել և ընդլայնել Կողմերի միջև տնտեսական համագործակցությունը.
2. մշտադիտարկել առևտրային և ներդրումային հարաբերությունները՝ բացահայտել ներդրումների ընդլայնման հնարավորությունները և բացահայտել ներդրումների հետ կապված այն խնդիրները, որոնք կարող են նպատակահարմար լինել համապատասխան հարթակում բանակցությունների համար.
3. անցկացնել խորհրդակցություններ Կողմերին հետաքրքրող կոնկրետ ներդրումային հարցերի վերաբերյալ.
4. աշխատել ներդրումային հոսքերի ընդլայնման ուղղությամբ.
5. բացահայտել և աշխատել ներդրումային հոսքերի խոչընդոտների վերացման ուղղությամբ, և
6. համապատասխան դեպքերում պահանջել մասնավոր հատվածի տեսակետները՝ Խորհրդի աշխատանքին առնչվող հարցերի վերաբերյալ:

**ՀՈԴՎԱԾ 3.5. Խորհրդի դերը**

Խորհուրդը հանդիպում է Կողմերի կողմից համաձայնեցված ժամանակ և վայրերում, սակայն Կողմերը ձգտում են հանդիպել ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

Կողմը կարող է առևտրի կամ ներդրումային կոնկրետ հարց ուղղել Խորհրդին՝ տվյալ հարցի նկարագրությունը ներառող գրավոր հարցում ներկայացնելով մյուս Կողմին: Հարցումն ուղարկելուց հետո Խորհուրդն անհապաղ քննարկում է հարցը, եթե հարցում ներկայացնող Կողմը չի համաձայնում հետաձգել հարցի քննարկումը: Յուրաքանչյուր Կողմ ձգտում է հնարավորություն տալ Խորհրդին քննարկելու հարցը մինչև այնպիսի գործողություններ ձեռնարկելը, որոնք կարող են բացասաբար ազդել մյուս Կողմի առևտրային կամ ներդրումային շահերի վրա:

## ԳԼՈՒԽ 4
## ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՀՈԴՎԱԾ 4.1. Ընդհանուր բացառությունները

1. 2-րդ գլխի (Ծառայությունների առևտուրը) նպատակներով ԾԱԳՀ-ի XIV հոդվածը, ներառյալ դրա ծանոթագրությունները՝ համապատասխան փոփոխություններով (*mutatis mutandis*), ներառվում են սույն Համաձայնագրում և կազմում են դրա անբաժանելի մասը:

### ՀՈԴՎԱԾ 4.2. Անվտանգության առնչվող բացառությունները

Սույն Համաձայնագրում ոչինչ չի մեկնաբանվում այնպես, որ՝

ա) որևէ Կողմից պահանջվի տրամադրել այնպիսի տեղեկություն, որի բացահայտումն այն համարում է իր կարևոր անվտանգային շահերին հակասող, կամ

բ) որևէ Կողմի համար խոչընդոտ լինի ձեռնարկելու այնպիսի գործողություններ, որոնք այն համարում է անհրաժեշտ իր կարևոր անվտանգային շահերի պաշտպանության համար՝

i) տրոհվող և ջերմամիջուկային նյութերի կամ այն նյութերի հետ կապված, որոնցից պատրաստվել են դրանք,

ii) զենքի, զինամթերքի և ռազմական գույքի առևտրի և այլ ապրանքների կամ նյութերի առևտրի հետ կապված, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրականացվում է զինված ուժերին մատակարարելու համար,

iii) ուղղակիորեն կամ անուղղակիորեն ռազմական հաստատության մատակարարման նպատակով ծառայությունների մատուցման հետ կապված,

iv) հաշվի առնելով պատերազմը կամ միջազգային հարաբերություններում այլ արտակարգ իրավիճակներ, կամ

գ) որևէ Կողմի համար խոչընդոտ լինի ձեռնարկելու որևէ գործողություն՝ ի կատարումն միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման նպատակներով Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ ստանձնած իր պարտավորությունների:

### ՀՈԴՎԱԾ 4.3. Հարկումը

1. Բացառությամբ այն դրույթների, որոնց համաձայն իրավունքներն ու

պարտավորությունները նաև տրամադրվում կամ սահմանվում են ԱՀԿ համաձայնագրի շրջանակներում, սույն Համաձայնագրում որևէ դրույթ չի կիրառվում հարկման միջոցի նկատմամբ:

2. Սույն Համաձայնագրում որևէ դրույթ չպետք է ազդի որևէ Կողմի՝ որևէ հարկային կոնվենցիայով նախատեսված իրավունքների և պարտավորությունների վրա: Սույն Համաձայնագրի և որևէ այդպիսի հարկային կոնվենցիայի միջև հակասության դեպքում այդ հարկային կոնվենցիան գերակայում է միայն այդ հակասության մասով:

## ԳԼՈՒԽ 5
## ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

### ՀՈԴՎԱԾ 5.1. Նպատակը

Սույն գլխի նպատակն է ստեղծել գործուն և արդյունավետ մեխանիզմ՝ սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման առնչությամբ Կողմերի միջև վեճերից խուսափելու և դրանք կարգավորելու համար՝ նպատակ ունենալով հնարավորության դեպքում հասնելու փոխադարձաբար համաձայնեցված լուծման:

### ՀՈԴՎԱԾ 5.2. Համագործակցությունը

Կողմերը ձգտում են համաձայնություն ձեռք բերել սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման վերաբերյալ և համագործակցության միջոցով գործադրում են հնարավոր բոլոր ջանքերը՝ իրենց գործունեության վրա հնարավոր ազդեցություն ունեցող ցանկացած հարցում փոխադարձաբար բավարարող լուծում գտնելու համար:

### ՀՈԴՎԱԾ 5.3. Կիրառման շրջանակը

1. Բացառությամբ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերություններով նախատեսված դեպքերի՝ սույն գլխի դրույթները կիրառվում են սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման առնչությամբ Կողմերի միջև ցանկացած վեճի կարգավորման նկատմամբ (այսուհետ՝ վերաբերելի դրույթներ), ցանկացած դեպքում, երբ Կողմը համարում է, որ՝

ա) մյուս Կողմի միջոցը չի համապատասխանում սույն Համաձայնագրով ստանձնած իր պարտավորություններին, կամ

բ) մյուս Կողմն այլ կերպ չի իրականացրել սույն Համաձայնագրով սահմանված իր պարտավորությունները:

2. Սույն գլխով չեն կարգավորվում այն բողոքները, որոնք կապված չեն խախտումների հետ, և այլ իրավիճակների հետ կապված բողոքները:

3. Կողմերը համաձայնում են, որ 3-րդ գլխի շրջանակներում (Ներդրումների դյուրացումը) ծագող որևէ հարց Կողմերից ոչ մեկը չի կարգավորի սույն գլխի համաձայն վեճերի կարգավորման մեխանիզմով:

### ՀՈԴՎԱԾ 5.4. Կոնտակտային անձինք

1. Յուրաքանչյուր Կողմ նշանակում է կոնտակտային անձ՝ սույն գլխի շրջանակներում նախաձեռնված ցանկացած վեճի մասով Կողմերի միջև

հաղորդակցությունը հեշտացնելու համար:

2. Սույն գլխի համաձայն ներկայացված ցանկացած պահանջ, ծանուցում, գրավոր հայտարարություն կամ այլ փաստաթուղթ մյուս Կողմին կտրամադրվի այդ Կողմի նշանակած կոնտակտային անձի միջոցով:

**ՀՈԴՎԱԾ 5.5. Տեղեկություններ ստանալու պահանջը**

Նախքան համապատասխանաբար 5.6 կամ 5.7 հոդվածների համաձայն խորհրդակցությունների, բարի ծառայությունների, միջնորդության կամ հաշտարարության պահանջ ներկայացնելը՝ Կողմը կարող է գրավոր պահանջել ցանկացած վերաբերելի տեղեկություն վերոնշյալ միջոցի մասին: Կողմը, որին ներկայացվել է պահանջը, գործադրում է բոլոր ջանքերը տրամադրելու համար պահանջված տեղեկությունը գրավոր պատասխանով, որը պետք է ներկայացվի ոչ ուշ, քան պահանջն ստանալու օրվանից 30 օր հետո:

**ՀՈԴՎԱԾ 5.6. Խորհրդակցությունները**

1. Կողմերը փորձում են 5.3 հոդվածում նշված ցանկացած վեճ լուծել բարեխղճորեն՝ խորհրդակցություններ սկսելու միջոցով՝ փոխադարձաբար համաձայնեցված լուծման հասնելու նպատակով:

2. Կողմը փորձում է պահանջել խորհրդակցությունների անցկացում մյուս Կողմին ուղարկված գրավոր պահանջի միջոցով՝ նշելով պահանջ ներկայացնելու պատճառները, այդ թվում՝ խնդրո առարկա միջոցը և դրա փաստական և իրավական հիմքերի նկարագրությունը՝ մատնանշելով այն վերաբերելի դրույթները, որոնք վերջինս համարում է կիրառելի:

3. Կողմը, որին ներկայացվել է խորհրդակցություններ անցկացնելու պահանջը, պետք է պահանջին պատասխանի անհապաղ, սակայն ոչ ուշ, քան պահանջն ստանալու օրվանից 20 օր հետո: Խորհրդակցությունները անցկացվում են պահանջն ստանալու օրվանից հետո 40 օրվա ընթացքում: Խորհրդակցությունները պահանջն ստանալու օրվանից 40 օրվա ընթացքում համարվում են ավարտված, եթե Կողմերն այլ համաձայնություն ձեռք չեն բերում:

4. Հրատապ հարցերի վերաբերյալ խորհրդակցությունները, այդ թվում՝ այն խորհրդակցությունները, որոնք վերաբերում են սեզոնային ծառայություններին, անցկացվում են պահանջն ստանալու օրվանից հետո 20 օրվա ընթացքում: Խորհրդակցությունները համարվում են ավարտված այդ 20 օրվա ընթացքում, եթե Կողմերն այլ համաձայնություն ձեռք չեն բերում:

5. Յուրաքանչյուր Կողմ խորհրդակցությունների ընթացքում տրամադրում է բավարար տեղեկություններ, որպեսզի հնարավոր լինի լիովին ուսումնասիրելու խնդրո առարկա միջոցը՝ ներառյալ այն հարցը, թե ինչպես է այդ միջոցն ազդում սույն Համաձայնագրի գործողության և կիրառության վրա:

6. Խորհրդակցությունները, այդ թվում՝ բացահայտված բոլոր տեղեկությունները և խորհրդակցությունների ընթացքում Կողմերի դիրքորոշումները գաղտնի են և հետագա որևէ ընթացակարգի ժամանակ չպետք է սահմանափակեն

ցանկացած Կողմի իրավունքները:

7. Խորհրդակցությունները կարող են անցկացվել անձամբ կամ Կողմերի համաձայնությամբ հաղորդակցության ցանկացած այլ միջոցով: Եթե Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ, ապա խորհրդակցություններն անձամբ անցկացվելու դեպքում տեղի են ունենում այն Կողմի տարածքում, որին ներկայացվել է պահանջը:

8. Եթե Կողմը, որին պահանջ է ներկայացվել, այն ստանալու օրվանից հետո 15 օրվա ընթացքում չի պատասխանում պահանջին, կամ եթե խորհրդակցությունները չեն անցկացվում համապատասխանաբար 3-րդ կամ 4-րդ պարբերություններում սահմանված ժամկետներում, կամ եթե Կողմերը համաձայնում են խորհրդակցություններ չանցկացնել, կամ եթե խորհրդակցություններն ավարտվել են, սակայն Կողմերը փոխադարձաբար համաձայնեցված լուծման չեն հանգել, ապա խորհրդակցությունների անցկացում հայցած Կողմը կարող է պահանջել 5.8 հոդվածի (Կոլեգիայի ստեղծումը) կիրառում:

**ՀՈԴՎԱԾ 5.7. Բարի ծառայություններ, միջնորդություն կամ հաշտարարություն**

1. Կողմերը կարող են ցանկացած պահի համաձայնել ներգրավվել բարի ծառայությունների, միջնորդության կամ հաշտարարության ընթացակարգերում: Դրանք կարող են անցկացվել ցանկացած պահի և ավարտվել ցանկացած պահի՝ Կողմերից յուրաքանչյուրի կողմից:

2. Բարի ծառայություններ, միջնորդություն կամ հաշտարարություն ներառող վարույթները և այդ վարույթների ընթացքում Կողմերի արտահայտած կոնկրետ դիրքորոշումները գաղտնի են և չպետք է սահմանափակեն որևէ Կողմի իրավունքները սույն գլխի համաձայն ցանկացած հետագա վարույթում կամ Կողմերի կողմից ընտրված որևէ հարթակում իրականացվող ցանկացած այլ վարույթում:

3. Կողմերի համաձայնության դեպքում բարի ծառայությունների, միջնորդության կամ հաշտարարության ընթացակարգերը կարող են շարունակվել կոլեգիայի ընթացակարգերի իրականացմանը զուգընթաց:

**ՀՈԴՎԱԾ 5.8. Կոլեգիայի ստեղծումը**

1. Բողոք ներկայացրած Կողմը կարող է պահանջել կոլեգիայի ստեղծում, եթե՝

ա) պատասխանող Կողմը չի պատասխանում սույն Համաձայնագրի 5.6 հոդվածում նշված ժամկետներին համապատասխան խորհրդակցություններ անցկացնելու պահանջին, կամ

բ) սույն Համաձայնագրի 5.6 հոդվածում նշված խորհրդակցությունները չեն անցկացվել, կամ խորհրդակցություններ անցկացնելու պահանջը պատասխանող Կողմի կողմից ստանալու օրվանից հետո 40 օրվա ընթացքում կամ ԱՀԿ սկզբունքների իմաստով հրատապ, այդ թվում՝ սեզոնային ծառայությունների վերաբերյալ հարցերի դեպքում՝ 20 օրվա ընթացքում դրանց անցկացման արդյունքում վեճը չի կարգավորվել:

2. Կոլեգիա ստեղծելու պահանջը ներկայացվում է մյուս Կողմին ուղարկվող գրավոր պահանջի տեսքով, և դրանում նշվում են խնդրո առարկա հարցը և բողոքի

փաստական ու իրավական հիմքերը՝ նշելով համապատասխան վերաբերելի դրույթներն այնպես, որ դա բավարար լինի այդ միջոցի անհամապատասխանությունն այդ դրույթներին ներկայացնելու համար:

3. Բողոք ներկայացրած Կողմի կողմից 1-ին պարբերությանը համապատասխան պահանջ ներկայացվելու դեպքում ստեղծվում է կոլեգիա:

**ՀՈԴՎԱԾ 5.9. Կոլեգիայի կազմը**

1. Եթե Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ, ապա կոլեգիան կազմվում է երեք անդամից:

2. Կոլեգիա ստեղծելու մասին պահանջը 5.8.2 հոդվածին համապատասխան ներկայացվելուց հետո 25 օրվա ընթացքում Կողմերից յուրաքանչյուրը նշանակում է կոլեգիայի իր անդամին: Կողմերը 5.8.3 հոդվածին համապատասխան կոլեգիայի ստեղծումից հետո 45 օրվա ընթացքում ընդհանուր համաձայնությամբ նշանակում են կոլեգիայի երրորդ անդամին, որը գործում է որպես կոլեգիայի նախագահ:

3. Եթե Կողմերից որևէ մեկը 2-րդ պարբերությամբ սահմանված ժամկետում չի նշանակում կոլեգիայի անդամ, ապա մյուս Կողմը 20-օրյա ժամկետում կարող է պահանջել, որ ԱՀԿ-ի գլխավոր տնօրենը նման պահանջ ստանալուց հետո 20-օրյա ժամկետում նշանակի կոլեգիայի չնշանակված անդամներին:

4. Եթե ԱՀԿ-ի գլխավոր տնօրենը ծանուցում է վեճի Կողմերին, որ ինքը բացակայում է, կամ 3-րդ պարբերության համաձայն ներկայացված պահանջի օրվանից հետո 20 օրվա ընթացքում չի նշանակում կոլեգիայի չնշանակված անդամին, ապա վեճի ցանկացած Կողմ կարող է պահանջել, որ Մշտական արբիտրաժային դատարանի գլխավոր քարտուղարը նման պահանջ ստանալուց հետո 20-օրյա ժամկետում նշանակի կոլեգիայի չնշանակված անդամին:

5. Եթե Կողմերը 2-րդ պարբերությամբ սահմանված ժամկետում ձեռք չեն բերում համաձայնություն կոլեգիայի նախագահի վերաբերյալ, ապա նրանք հաջորդող 20 օրերի ընթացքում փոխանակում են իրենց համապատասխան ցուցակները՝ յուրաքանչյուրում երեք թեկնածու, որոնք Կողմերից որևէ մեկի քաղաքացի չեն: Այնուհետև այդ ցուցակներից վիճակահանության միջոցով նշանակվում է նախագահն այն ժամկետի ավարտից հետո 10-օրյա ժամկետում, որի ընթացքում Կողմերը պետք է փոխանակեն թեկնածուների իրենց համապատասխան ցուցակները: Կոլեգիայի նախագահի՝ վիճակահանությամբ ընտրությունը կատարվում է Համատեղ կոմիտեի միջոցով:

6. Եթե Կողմը 5-րդ պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում երեք թեկնածուից բաղկացած իր ցուցակը, ապա նախագահը նշանակվում է վիճակահանությամբ մյուս Կողմի ներկայացրած ցուցակից:

7. Կոլեգիայի ձևավորման ամսաթիվն այն ամսաթիվն է, երբ կոլեգիայի ընտրված երեք անդամներից վերջինը Կողմերին ծանուցում է իր նշանակումն ընդունելու մասին:

**ՀՈԴՎԱԾ 5.10. Հրատապության մասին որոշումը**

Կողմի կողմից նման պահանջ ներկայացվելու դեպքում կոլեգիան իր ձևավորումից

հետո՝ 15 օրվա ընթացքում, նախնական որոշում է կայացնում այն մասին, թե արդյոք վեճը վերաբերում է հրատապ հարցերին, թե ոչ:

**ՀՈԴՎԱԾ 5.11. Կոլեգիայի անդամներին ներկայացվող պահանջները**

1. Կոլեգիայի յուրաքանչյուր անդամ պետք է՝

ա) ունենա իրավունքի, միջազգային առևտրի ոլորտում կամ սույն Համաձայնագրով կարգավորվող այլ հարցերում մեծ փորձառություն,

բ) լինի անկախ Կողմերից յուրաքանչյուրից և չլինի փոխկապակցված դրանց հետ կամ դրանցից ցուցումներ չստանա,

գ) հանդես գա իր անունից և չստանա ցուցումներ որևէ կազմակերպությունից կամ կառավարությունից՝ վեճի հետ կապված հարցերի վերաբերյալ,

դ) պահպանի VIII հավելվածում սահմանված Վարքագծի կանոնակարգը (Կոլեգիայի անդամների և սույն Համաձայնագրի շրջանակներում վեճերի կարգավորման վարույթներում ներգրավված այլ անձանց վարքագծի կանոնակարգ), և

ե) ընտրվի բացառապես օբյեկտիվության, անաչառության, վստահելիության և խելամիտ դատողության հիման վրա:

2. Նախագահը պետք է ունենա նաև փորձ վեճերի կարգավորման ընթացակարգերի ոլորտում:

3. 5.7 հոդվածի համաձայն Կողմերին նույնական կամ էապես համարժեք հարցերում բարի ծառայություններ, միջնորդություն կամ հաշտարարություն տրամադրած անձինք իրավունք չեն ունենա նշանակվելու այդ հարցով կոլեգիայի անդամ:

**ՀՈԴՎԱԾ 5.12. Կոլեգիայի անդամների փոխարինումը**

Եթե սկզբնական կոլեգիայի անդամներից որևէ մեկն անկարող է դառնում իրականացնել իր գործառույթները, հրաժարվում է գործել, կամ եթե նրան անհրաժեշտ է փոխարինել, քանի որ կոլեգիայի այդ անդամը չի պահպանում վարքագծի կանոնակարգը, ապա կոլեգիայի՝ նրան հաջորդող անդամը նշանակվում է նույն կարգով, ինչպես 5.9 հոդվածին (Կոլեգիայի կազմը) համապատասխան սահմանված է կոլեգիայի սկզբնական անդամի նշանակման համար, և կոլեգիայի աշխատանքը կոլեգիայի հաջորդ անդամի նշանակման ընթացքում կասեցվում է: Ընթացակարգը շարունակվում է այնտեղից, որտեղից կասեցվել է, եթե Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ կամ Կողմերից մեկի պահանջով Կոլեգիայի կողմից այլ բան որոշված չէ:

**ՀՈԴՎԱԾ 5.13. Կոլեգիայի գործառույթները**

Եթե Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ, ապա կոլեգիան՝

ա) օբյեկտիվ գնահատական է տալիս իրեն ներկայացված հարցին, այդ թվում՝ օբյեկտիվորեն գնահատում է գործի փաստերը և խնդրո առարկա միջոցի կիրառելիությունը և համապատասխանությունը վերաբերելի դրույթներին,

բ) իր որոշումներում և զեկույցներում ներառում է փաստերի և իրավունքին առնչվող հարցերի վերաբերյալ եզրահանգումները, այդ եզրահանգումների

հիմնավորումները և եզրակացությունները, և

գ) պարբերաբար խորհրդակցում է Կողմերի հետ և պատշաճ հնարավորություններ է ստեղծում փոխադարձաբար համաձայնեցված լուծման հասնելու համար:

**ՀՈԴՎԱԾ 5.14. Տեխնիկական առաջադրանքը**

1. Եթե Կողմերը կոլեգիայի ստեղծման օրվանից հետո 20 օրվա ընթացքում այլ համաձայնության չեն գալիս, ապա կոլեգիայի տեխնիկական առաջադրանքն է՝

«Կողմերի կողմից վկայակոչված՝ սույն Համաձայնագրի համապատասխան վերաբերելի դրույթների լույսի ներքո ուսումնասիրել կոլեգիայի ստեղծման մասին պահանջում նշված հարցը, եզրակացություններ տրամադրել սույն Համաձայնագրի համապատասխան վերաբերելի դրույթներին խնդրո առարկա միջոցի համապատասխանության մասին, ինչպես նաև առկայության դեպքում առաջարկություններ ներկայացնել վեճը լուծելու միջոցների մասին և 5.18 և 5.19 հոդվածներին համապատասխան ներկայացնել զեկույց»:

2. Եթե Կողմերը համաձայնության են գալիս 1-ին պարբերության մեջ նշվածից տարբեր այլ տեխնիկական առաջադրանքի վերաբերյալ՝ դրանում նշված ժամկետում, ապա նրանք համաձայնեցված տեխնիկական առաջադրանքը ներկայացնում են կոլեգիային ոչ ուշ, քան համաձայնությունը ձեռք բերելուց 10 օր հետո:

**ՀՈԴՎԱԾ 5.15. Մեկնաբանման կանոնները**

1. Կոլեգիան վերաբերելի դրույթները մեկնաբանում է միջազգային հանրային իրավունքի մեկնաբանման սովորութային կանոններին համապատասխան:

2. Անհրաժեշտության դեպքում կոլեգիան նաև կարող է հաշվի առնել սույն Համաձայնագրի շրջանակներում ստեղծված կոլեգիաների և ԱՀԿ-ի վեճերի կարգավորման հարցերով մարմնի կողմից հաստատված Բողոքարկման հարցերով մարմնի զեկույցներում առկա համապատասխան մեկնաբանությունները:

3. Կոլեգիայի որոշումներով չեն կարող ավելացվել կամ պակասեցվել սույն Համաձայնագրով սահմանված Կողմերի իրավունքները և պարտավորությունները:

**ՀՈԴՎԱԾ 5.16. Կոլեգիայի ընթացակարգերը**

1. Եթե Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ, ապա կոլեգիան գործում է VII հավելվածում (Կոլեգիայի ընթացակարգային կանոնները) սահմանված Ընթացակարգային օրինակելի կանոնների համաձայն:

2. Կոլեգիայի հետ դրա քննարկմանը ներկայացված հարցերի վերաբերյալ միակողմանի (ex parte) հաղորդակցություն չպետք է լինի:

3. Կոլեգիայի քննարկումները և դրան ներկայացված փաստաթղթերը գաղտնի են պահվում:

4. Կողմը, որը հավաստիացնում է, որ մյուս Կողմի միջոցը չի համապատասխանում սույն Համաձայնագրի դրույթներին, կրում է այդ անհամապատասխանությունը հաստատելու պարտականությունը: Կողմը, որը հավաստիացնում է, որ միջոցը ենթակա է սույն Համաձայնագրով սահմանված բացառության, կրում է այդ բացառության կիրառելի լինելը հաստատելու

պարտականությունը:

5. Կոլեգիան պետք է անհրաժեշտության դեպքում խորհրդակցի Կողմերի հետ և պատշաճ հնարավորություններ ստեղծի փոխադարձաբար համաձայնեցված լուծման հասնելու համար:

6. Կոլեգիան իր որոշումները կայացնում է, այդ թվում զեկույցները կազմում է կոնսենսուսով, սակայն եթե կոնսենսուսի հասնելը հնարավոր չէ, ապա ձայների մեծամասնությամբ: Ցանկացած անդամ կարող է առանձին կարծիքներ ներկայացնել միաձայն չհամաձայնեցված հարցերի վերաբերյալ, և այդ առանձին կարծիքները չպետք է հրապարակվեն:

7. Կոլեգիայի որոշումները ենթակա են պարտադիր կատարման Կողմերի կողմից:

**ՀՈԴՎԱԾ 5.17. Տեղեկությունների ստացումը**

1. Կոլեգիան կարող է Կողմի պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ Կողմերից պահանջել այնպիսի վերաբերելի տեղեկությունների ներկայացում, որոնք այն համարում է անհրաժեշտ և համապատասխան: Կողմերն անհապաղ և ամբողջությամբ պատասխանում են կոլեգիայի՝ տեղեկություններ տրամադրելու վերաբերյալ ցանկացած պահանջի:

2. Կոլեգիան կարող է Կողմի պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ ցանկացած աղբյուրից ձեռք բերել ցանկացած այնպիսի տեղեկություն, որն այն համարում է անհրաժեշտ:

3. Կոլեգիան կարող է Կողմի պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ ստանալ տեխնիկական խորհրդատվություն կամ փորձագիտական կարծիք իր կողմից համապատասխան համարվող ցանկացած անհատից կամ մարմնից՝ Կողմերի կողմից համաձայնեցված պայմաններով:

4. Սույն հոդվածի համաձայն կոլեգիայի կողմից ձեռք բերված ցանկացած տեղեկություն հասանելի է դարձվում Կողմերին, և Կողմերը կարող են մեկնաբանություններ ներկայացնել այդ տեղեկության վերաբերյալ:

**ՀՈԴՎԱԾ 5.18. Միջանկյալ զեկույց**

1. Կոլեգիան Կողմերին ներկայացնում է միջանկյալ զեկույց կոլեգիայի ձևավորման ամսաթվից հետո 90 օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ կոլեգիան համարում է, որ այս վերջնաժամկետը հնարավոր չէ պահպանել, կոլեգիայի նախագահը Կողմերին և Համատեղ կոմիտեին գրավոր ծանուցում է այդ մասին՝ նշելով ուշացման պատճառները և այն ամսաթիվը, երբ կոլեգիան պլանավորում է ներկայացնել իր միջանկյալ զեկույցը: Ուշացումը ոչ մի դեպքում չպետք է գերազանցի վերջնաժամկետից հետո 30 օրը, եթե Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: Միջանկյալ զեկույցը չի հրապարակվում:

2. Միջանկյալ զեկույցը պարունակում է նկարագրական մաս և կոլեգիայի եզրահանգումներն ու եզրակացությունները:

3. Յուրաքանչյուր Կողմ կարող է կոլեգիային ներկայացնել գրավոր դիտարկումներ և միջանկյալ զեկույցի կոնկրետ հայեցակետերը վերանայելու

վերաբերյալ գրավոր պահանջ՝ միջանկյալ զեկույցը ներկայացվելու օրվանից հետո 15 օրվա ընթացքում: Կողմը կարող է մյուս Կողմի պահանջի վերաբերյալ ներկայացնել դիտարկում՝ պահանջը ներկայացվելու օրվանից հետո վեց օրվա ընթացքում:

4. Քննարկելով միջանկյալ զեկույցի վերաբերյալ Կողմերից յուրաքանչյուրի ներկայացրած գրավոր դիտարկումներն ու պահանջները՝ կոլեգիան կարող է փոփոխել իր միջանկյալ զեկույցը և հարկ համարելու դեպքում կատարել լրացուցիչ ուսումնասիրություն:

**ՀՈԴՎԱԾ 5.19. Վերջնական զեկույց**

1. Կոլեգիան իր վերջնական զեկույցը Կողմերին և Համատեղ կոմիտե է ներկայացնում կոլեգիայի ձևավորման ամսաթվից հետո 120 օրվա ընթացքում: Այն դեպքում, երբ կոլեգիան համարում է, որ այս վերջնաժամկետը հնարավոր չէ պահպանել, կոլեգիայի նախագահը Կողմերին գրավոր ծանուցում է այդ մասին՝ նշելով ուշացման պատճառները և այն ամսաթիվը, երբ կոլեգիան պլանավորում է ներկայացնել իր վերջնական զեկույցը: Ուշացումը ոչ մի դեպքում չպետք է գերազանցի վերջնաժամկետից հետո 30 օրը, եթե Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

2. Վերջնական զեկույցը ներառում է Կողմերի կողմից միջանկյալ զեկույցի վերաբերյալ արված գրավոր դիտարկումների և պահանջների մասին քննարկում: Կոլեգիան կարող է իր վերջնական զեկույցում առաջարկել վերջնական զեկույցի իրականացման հնարավոր եղանակները:

3. Վերջնական զեկույցը չի հրապարակվում, եթե Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

**ՀՈԴՎԱԾ 5.20. Վերջնական զեկույցի կատարումը**

1. Այն դեպքում, երբ կոլեգիան համարում է, որ պատասխանող Կողմը գործել է 5.3 հոդվածով սահմանված վերաբերելի դրույթին անհամապատասխան, պատասխանող Կողմը ձեռնարկում է ցանկացած անհրաժեշտ միջոց՝ կոլեգիայի որոշումն անհապաղ և բարեխղճորեն կատարելու համար:

2. Անմիջապես կատարելու անհնարինության դեպքում պատասխանող Կողմը ոչ ուշ, քան վերջնական զեկույցը ներկայացվելու օրվանից հետո՝ 40 օրվա ընթացքում, ծանուցում է բողոքը ներկայացրած Կողմին և Համատեղ կոմիտեին այն ողջամիտ ժամկետի մասին, որն անհրաժեշտ է վերջնական զեկույցը կատարելու համար, և Կողմերը ձգտում են համաձայնության գալ վերջնական զեկույցին համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ ողջամիտ ժամկետի վերաբերյալ:

**ՀՈԴՎԱԾ 5.21. Համապատասխանություն ապահովելու համար ողջամիտ ժամկետը**

1. Եթե Կողմերը համաձայնության չեն եկել ողջամիտ ժամկետի տևողության վերաբերյալ, ապա բողոք ներկայացրած Կողմը ոչ ուշ, քան 5.20 հոդվածի 2-րդ պարբերությանը համապատասխան պատասխանող Կողմի կողմից ծանուցումն ստանալու օրվանից 30 օր հետո գրավոր պահանջում է սկզբնական կոլեգիայից որոշել

ողջամիտ ժամկետի տևողությունը: Նման պահանջի մասին միաժամանակ ծանուցվում են պատասխանող Կողմը և Համատեղ կոմիտեն: Սույն պարբերության մեջ նշված 30-օրյա ժամկետը կարող է Կողմերի փոխհամաձայնությամբ երկարաձգվել:

2. Սկզբնական կոլեգիան համապատասխան պահանջն ստանալու օրվանից 20 օրվա ընթացքում Կողմերին և Համատեղ կոմիտե է ներկայացնում իր որոշումը:

3. Վերջնական զեկույցին համապատասխանություն ապահովելու համար ողջամիտ ժամկետի տևողությունը կարող է երկարաձգվել Կողմերի փոխհամաձայնությամբ:

**ՀՈԴՎԱԾ 5.22. Համապատասխանության ստուգումը**

1. Պատասխանող Կողմը գրավոր ծանուցում է բողոք ներկայացրած Կողմին և Համատեղ կոմիտեին վերջնական զեկույցին համապատասխանության ապահովման ընթացքի մասին՝ վերջնական զեկույցին համապատասխանության ապահովման ողջամիտ ժամկետի ավարտից առնվազն մեկ ամիս առաջ, եթե Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

2. Պատասխանող Կողմը ոչ ուշ, քան ողջամիտ ժամկետն ավարտվելու օրը ծանուցում է ուղարկում բողոք ներկայացրած Կողմին և Համատեղ կոմիտեին ցանկացած միջոցի մասին, որն այն ձեռնարկել է վերջնական զեկույցին համապատասխանությունն ապահովելու համար՝ միաժամանակ ուղարկելով նաև նկարագրություն այն մասին, թե ինչպես է այդ միջոցով ապահովվում համապատասխանություն, որը բավարար է բողոք ներկայացրած Կողմի կողմից նախքան ողջամիտ ժամկետի ավարտն այդ միջոցը գնահատելու հնարավորություն ընձեռելու համար:

3. Այն դեպքում, երբ Կողմերը համաձայնության չեն գալիս վերջնական զեկույցին համապատասխանությունն ապահովող միջոցների առկայության մասին կամ վերաբերելի դրույթներին դրանց համապատասխանության մասին, բողոք ներկայացրած Կողմը կարող է գրավոր պահանջել սկզբնական կամ վերագումարվող կոլեգիայից որոշում կայացնել այդ հարցի վերաբերյալ՝ նախքան 5.23.1(գ) հոդվածին համապատասխան հատուցման համար դիմելը կամ արտոնությունների կասեցումը: Նման պահանջի մասին միաժամանակ ծանուցվում են պատասխանող Կողմը և Համատեղ կոմիտեն:

4. Պահանջի մեջ ներկայացվում են բողոքի փաստական և իրավական հիմքերը, այդ թվում՝ խնդրո առարկա հատուկ միջոցների սահմանումը և նշում այն մասին, թե ինչու պատասխանող Կողմի ձեռնարկած միջոցներով չի ապահովվում վերջնական զեկույցին համապատասխանությունը, կամ դրանք այլ կերպ չեն համապատասխանում վերաբերելի դրույթներին:

5. Կոլեգիան պահանջը ներկայացվելուց հետո 60 օրվա ընթացքում Կողմերին և Համատեղ կոմիտե է ներկայացնում իր որոշումը:

**ՀՈԴՎԱԾ 5.23. Անհամապատասխանության դեպքում իրավական պաշտպանության ժամանակավոր միջոցները**

1. Եթե՝

ա) պատասխանող Կողմը նախքան ողջամիտ ժամկետի ավարտը չի ծանուցում վերջնական զեկույցին համապատասխանությունն ապահովելու համար ձեռնարկված որևէ միջոցի մասին, կամ

բ) պատասխանող Կողմը բողոք ներկայացրած Կողմին գրավոր ծանուցում է ողջամիտ ժամկետում վերջնական զեկույցին համապատասխանությունն ապահովելու անհնարինության մասին, կամ

գ) սկզբնական կամ վերագումարվող կոլեգիան գտնում է, որ վերջնական զեկույցին համապատասխանությունն ապահովելու որևէ միջոց չի ձեռնարկվել կամ պատասխանող Կողմի կողմից ծանուցված՝ ձեռնարկված միջոցը չի համապատասխանում վերաբերելի դրույթներին,

ապա պատասխանող Կողմը բողոք ներկայացրած Կողմի պահանջով խորհրդակցություններ է սկսում՝ փոխադարձաբար ընդունելի հատուցման կամ այլընտրանքային պայմանավորվածության մասին համաձայնության գալու նպատակով:

2. Եթե Կողմերը 1-ին պարբերությանը համապատասխան ներկայացված պահանջն ստանալու օրվանից հետո 30 օրվա ընթացքում չեն հասնում փոխադարձաբար ընդունելի համաձայնության, ապա բողոք ներկայացրած Կողմը կարող է գրավոր ծանուցում ուղարկել պատասխանող Կողմին այն մասին, որ վերջինս մտադիր է կասեցնել սույն Համաձայնագրով նախատեսված զիջումների կիրառումը կամ այլ պարտավորություններ:

3. Բողոք ներկայացրած Կողմը կարող է պատասխանող Կողմին ծանուցումը հանձնելու օրվանից 30 օր հետո սկսել նախորդ պարբերության մեջ նշված՝ զիջումների կիրառման կամ այլ պարտավորությունների կասեցումը, եթե պատասխանող Կողմը 7-րդ պարբերության համաձայն պահանջ չի ներկայացրել:

4. Զիջումների կամ այլ պարտավորությունների կասեցումը՝

ա) պետք է լինի պատասխանող Կողմի կողմից վերջնական զեկույցին համապատասխանությունը չապահովելու հետևանքով առաջացած չեղարկմանը կամ վնասին համարժեք մակարդակով, և

բ) պետք է սահմանափակվի սույն Համաձայնագրի շրջանակներում պատասխանող Կողմին տրամադրված արտոնություններով:

5. Դիտարկելով այն հարցը, թե 2-րդ պարբերությանը համապատասխան որ զիջումները կամ այլ պարտավորություններ պետք է կասեցվեն, բողոք ներկայացրած Կողմը կիրառում է հետևյալ սկզբունքները.

ա) բողոք ներկայացրած Կողմը պետք է նախևառաջ փորձի կասեցնել այն զիջումները կամ այլ պարտավորություններ, որոնք սահմանվել են միևնույն այն ոլորտի կամ ոլորտների համար, որի (որոնց) վրա ազդել է այն միջոցը, որը կոլեգիայի կողմից համարվել է սույն Համաձայնագրին անհամապատասխան, և

բ) բողոք ներկայացրած Կողմը կարող է կասեցնել այլ ոլորտների համար սահմանված զիջումները կամ այլ պարտավորություններ, եթե այն համարում է, որ նպատակահարմար կամ արդյունավետ չէ նույն ոլորտի (ոլորտների) համար սահմանված զիջումները կամ այլ պարտավորություններ կասեցնելը: Այն հաղորդագրության մեջ, որով վերջինս ծանուցում է նման որոշման մասին, պետք է նշվեն

այն պատճառները, որոնց հիման վրա այն կայացվել է:

6. Չիջումների կամ այլ պարտավորությունների կասեցումը կամ 1-ին պարբերությամբ նախատեսված փոխադարձաբար ընդունելի համաձայնությունը ժամանակավոր է և միայն կիրառվում է մինչև համապատասխան վերաբերելի դրույթներին միջոցի անհամապատասխանության վերացումը կամ մինչև Կողմերի կողմից սույն Համաձայնագրի 5.28 հոդվածի համաձայն փոխադարձաբար համաձայնեցված լուծման հասնելը:

7. Եթե պատասխանող Կողմը համարում է, որ զիջումների և այլ պարտավորությունների կասեցումը չի համապատասխանում 4-րդ և 5-րդ պարբերություններին, ապա այդ Կողմը կարող է սկզբնական կոլեգիայից գրավոր պահանջել ուսումնասիրելու հարցը ոչ ուշ, քան 2-րդ պարբերությամբ նախատեսված ծանուցումն ստանալու օրվանից 15 օր հետո: Այդ պահանջի մասին միաժամանակ ծանուցվում են բողոքը ներկայացրած Կողմը և Համատեղ կոմիտեն: Սկզբնական կոլեգիան այդ հարցի վերաբերյալ իր որոշման մասին Կողմերին և Համատեղ կոմիտեին պետք է ծանուցի ոչ ուշ, քան պատասխանող Կողմի կողմից պահանջ ստանալու օրվանից 45 օր հետո, կամ եթե սկզբնական կոլեգիան չի կարող ստեղծվել իր սկզբնական անդամների կազմով, ապա այն օրվանից 45 օր հետո, երբ նշանակվում է նորաստեղծ կոլեգիայի վերջին անդամը: Չիջումները կամ այլ պարտավորություններ չեն կասեցվում, քանի դեռ կոլեգիան սույն պարբերության համաձայն չի կայացրել իր որոշումը: Չիջումների կամ այլ պարտավորությունների կասեցումը պետք է համապատասխանի այդ որոշմանը:

**ՀՈԴՎԱԾ 5.24. Իրավական պաշտպանության ժամանակավոր միջոցների ընդունումից հետո համապատասխանության ապահովման համար ձեռնարկված ցանկացած միջոցի վերանայումը**

1. Վերջնական զեկույցի վերաբերյալ կոլեգիայի որոշմանը համապատասխանության ապահովման համար ձեռնարկված միջոցի մասին պատասխանող Կողմի կողմից բողոք ներկայացրած Կողմին և Համատեղ կոմիտեին ծանուցելու դեպքում՝

ա) այն իրավիճակում, երբ զիջումներ կամ այլ պարտավորություններ կասեցնելու իրավունքը բողոքը ներկայացրած Կողմի կողմից 5.23 հոդվածի համաձայն իրացվել է, բողոք ներկայացրած Կողմը ոչ ուշ, քան ծանուցումն ստանալու օրվանից 40 օր հետո դադարեցնում է զիջումների կամ այլ պարտավորությունների կասեցումը՝ բացառությամբ 2-րդ պարբերության մեջ նշված դեպքերի, կամ

բ) այն իրավիճակում, երբ անհրաժեշտության դեպքում համաձայնություն է ձեռք բերվել փոխհատուցման մասին, պատասխանող Կողմը կարող է դադարեցնել այդ փոխհատուցման միջոցի կիրառումը ոչ ուշ, քան ծանուցումն ստանալու օրվանից 40 օր հետո՝ բացառությամբ 2-րդ պարբերության մեջ նշված դեպքերի:

2. Եթե Կողմերը ծանուցումն ստանալու օրվանից 40 օրվա ընթացքում համաձայնություն ձեռք չեն բերում այն հարցի վերաբերյալ, թե արդյոք 1-ին պարբերության համաձայն ծանուցված միջոցը համապատասխանում է համապատասխան վերաբերելի դրույթներին, բողոք ներկայացրած Կողմը հարցն

ուսումնասիրելու համար գրավոր պահանջ է ներկայացնում սկզբնական կոլեգիային: Նման պահանջի մասին միաժամանակ ծանուցվում են պատասխանող Կողմը և Համատեղ կոմիտեն: Կոլեգիայի որոշման մասին Կողմերը և Համատեղ կոմիտեն պետք է ծանուցվեն ոչ ուշ, քան պահանջը ներկայացվելու օրվանից 30 օր հետո: Եթե կոլեգիան որոշում է, որ 1-ին պարբերության համաձայն ծանուցված միջոցը համապատասխանում է վերաբերելի դրույթներին, ապա զիջումների կամ այլ պարտավորությունների կամ փոխհատուցում կիրառելու միջոցի կասեցումը, կոնկրետ իրավիճակից ելնելով, դադարեցվում է ոչ ուշ, քան որոշումն ընդունվելու օրվանից 15 օր հետո: Եթե կոլեգիան որոշում է, որ ծանուցված միջոցը միայն մասամբ է համապատասխանում վերաբերելի դրույթներին, ապա արտոնությունների կամ այլ պարտավորությունների կամ փոխհատուցման միջոցի կասեցման մակարդակը կոլեգիայի որոշման լույսի ներքո համապատասխանեցվում է:

**ՀՈԴՎԱԾ 5.25. Վարույթի կասեցումը կամ դադարեցումը**

Երկու Կողմերի կողմից գրավոր այդպիսի պահանջ ներկայացվելու դեպքում կոլեգիայի աշխատանքը Կողմերի կողմից համաձայնեցված և այդպիսի պահանջ ներկայացնելու օրվանից հետո 12 հաջորդական ամիսները չգերազանցող ժամկետով կասեցվում է: Կոլեգիայի աշխատանքը կասեցվելու դեպքում սույն բաժնով սահմանված համապատասխան ժամկետները երկարաձգվում են նույն ժամկետով, որով կասեցվել է կոլեգիայի աշխատանքը: Կոլեգիան վերսկսում է իր աշխատանքը Կողմերի գրավոր պահանջի հիման վրա՝ նախքան կասեցման ժամկետի ավարտը: Եթե կոլեգիայի աշխատանքը կասեցվել է 12 հաջորդական ամիսներից ավելի ժամկետով, ապա կոլեգիայի լիազորությունները դադարում են, և վեճերի կարգավորման ընթացակարգը դադարեցվում է:

**ՀՈԴՎԱԾ 5.26. Հարթակի ընտրությունը**

1. Սույն հոդվածով այլ բան նախատեսված չլինելու դեպքում սույն գլխով չի սահմանափակվում Կողմերի իրավունքները դիմելու այլ միջազգային առևտրային համաձայնագրերի շրջանակներում, որի անդամ են Կողմերը, վեճերի կարգավորման այլ հասանելի ընթացակարգերի օգնությանը:

2. Եթե սույն Համաձայնագրի կամ այլ միջազգային համաձայնագրի շրջանակներում, որի անդամ են Կողմերը, այդ թվում՝ ԱՀԿ համաձայնագրի շրջանակներում կոնկրետ միջոցի վերաբերյալ վեճ է առաջանում, ապա բողոք ներկայացրած Կողմը կարող է ընտրել վեճի կարգավորման հարթակը:

3. Կողմի կողմից հարթակն ընտրելուց և սույն գլխի կամ այլ միջազգային համաձայնագրի շրջանակներում 2-րդ պարբերության մեջ նշված կոնկրետ միջոցի մասով վեճի կարգավորման վարույթ հարուցելուց անմիջապես հետո կօգտագործվի ընտրված հարթակը՝ բացառելով մնացած բոլորը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առաջինն ընտրված հարթակն իրավազորության հետ կապված կամ դատավարական պատճառներով չկարողանա որոշում կայացնել վեճի առարկա հարցերի վերաբերյալ:

4. 3-րդ պարբերության նպատակներով՝

ա) սույն գլխի շրջանակներում վեճի կարգավորման վարույթը հարուցված է

համարվում այն դեպքում, երբ Կողմերից մեկը 5.8 հոդվածին համապատասխան պահանջում է կոլեգիայի ստեղծում,

բ) ԱՀԿ համաձայնագրի շրջանակներում վեճի կարգավորման վարույթը հարուցված է համարվում այն դեպքում, երբ Կողմերից մեկը ՎԿՊ-ի 6-րդ հոդվածին համապատասխան պահանջում է կոլեգիայի ստեղծումը, և

գ) ցանկացած այլ համաձայնագրի շրջանակներում վեճի կարգավորման վարույթը հարուցված է համարվում այդ համաձայնագրի վերաբերելի դրույթներին համապատասխան:

**ՀՈԴՎԱԾ 5.27. Ծախսերը**

1. Եթե Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ, ապա կոլեգիայի աշխատանքի հետ կապված ծախսերը և դրա վարույթների իրականացման հետ կապված մյուս ծախսերը հավասարապես կրում են երկու Կողմերը:

2. Կողմերից յուրաքանչյուրը կրում է կոլեգիայի վարույթների մասով իր սեփական ծախքերն ու իրավաբանական ծախսերը:

**ՀՈԴՎԱԾ 5.28. Փոխհամաձայնեցված լուծումը**

1. Կողմերը կարող են ցանկացած պահի ձեռք բերել փոխադարձաբար համաձայնեցված լուծում 5.3 հոդվածում նշված ցանկացած վեճի կապակցությամբ:

2. Եթե կոլեգիայի ընթացակարգի ընթացքում ձեռք է բերվել փոխադարձաբար համաձայնեցված լուծում, ապա Կողմերն այդ լուծման մասին համատեղ ծանուցում են կոլեգիայի նախագահին: Այդպիսի ծանուցում ստանալուց անմիջապես հետո կոլեգիայի աշխատանքը դադարեցվում է:

3. Կողմերից յուրաքանչյուրը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ՝ փոխհամաձայնեցված լուծումը համաձայնեցված ժամկետում իրականացնելու համար:

4. Իրագործող Կողմը ոչ ուշ, քան համաձայնեցված ժամկետի ավարտին մյուս Կողմին գրավոր տեղեկացնում է փոխհամաձայնեցված լուծման իրականացման համար ձեռնարկված ցանկացած միջոցի մասին:

**ՀՈԴՎԱԾ 5.29. Ժամկետները**

1. Սույն գլխում սահմանված բոլոր ժամկետները հաշվարկվում են օրացուցային օրերով այն գործողությանը կամ փաստին հաջորդող օրվանից, որին վերաբերում են, եթե սույն գլխով այլ բան նախատեսված չէ:

2. Սույն գլխում նշված ցանկացած ժամկետ կարող է փոփոխվել Կողմերի փոխհամաձայնությամբ:

**ՀՈԴՎԱԾ 5.30. Հավելվածները**

Համատեղ կոմիտեն կարող է փոփոխություններ կատարել VII (Կոլեգիայի ընթացակարգային կանոնները) և VIII (Կոլեգիայի անդամների և սույն Համաձայնագրի շրջանակներում վեճերի կարգավորման վարույթներում ներգրավված այլ անձանց վարքագծի կանոնակարգ) հավելվածներում:

## ԳԼՈՒԽ 6
## ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

### ՀՈԴՎԱԾ 6.1. Համատեղ կոմիտեն

1. Կողմերը սույնով ստեղծում են Համատեղ կոմիտե:

2. Համատեղ կոմիտեն՝

ա) կազմված է Կողմերի ներկայացուցիչներից, և

բ) կարող է ստեղծել մշտական կամ ժամանակավոր ենթակոմիտեներ կամ աշխատանքային խմբեր և իր որոշ լիազորություններ փոխանցել վերջիններիս:

3. Համատեղ կոմիտեն հանդիպում է սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում: Դրանից հետո այն հանդիպում է երկու տարին մեկ անգամ՝ սույն Համաձայնագրի հետ կապված ցանկացած հարց քննարկելու համար, եթե Կողմերն այլ համաձայնություն ձեռք չեն բերել: Համատեղ կոմիտեի հերթական նիստերն անցկացվում են Կողմերի պետությունների տարածքներում՝ հաջորդաբար:

4. Համատեղ կոմիտեն նաև անցկացնում է արտահերթ նիստեր՝ ցանկացած Կողմի կողմից նման պահանջ ստանալու օրվանից հետո՝ առանց անհարկի ուշացման:

5. Համատեղ կոմիտեի գործառույթները հետևյալն են.

ա) սույն Համաձայնագրի իրականացման արդյունքների և ընդհանուր գործողության վերանայում ու գնահատում՝ դրա նպատակների և այն կիրառելու ընթացքում ձեռք բերված փորձի համատեքստում,

բ) սույն Համաձայնագրում ցանկացած Կողմի առաջարկությամբ փոփոխություն կատարելու հարցի դիտարկում՝ ներառյալ սույն Համաձայնագրի շրջանակներում զիջումների մասով փոփոխություններ կատարելը,

գ) Կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման մասով առաջացող վեճերի բարեկամաբար լուծելուն ձգտում,

դ) սույն Համաձայնագրի շրջանակներում ստեղծված բոլոր ենթակոմիտեների և աշխատանքային խմբերի աշխատանքի վերահսկում և համակարգում,

ե) սույն Համաձայնագրի գործողության վրա ազդող ցանկացած հարցի քննարկում,

զ) Կողմերից որևէ մեկի կողմից պահանջի դեպքում սույն Համաձայնագրի դրույթների փոխադարձաբար համաձայնեցված մեկնաբանության մասին առաջարկության ներկայացում,

է) սույն Համաձայնագրով նախատեսված որոշումների ընդունում և առաջարկությունների ներկայացում, և

ը) Կողմերի համաձայնությամբ այլ գործառույթների իրականացում:

6. Համատեղ կոմիտեն սահմանում է իր աշխատակարգի կանոնները:

7. Համատեղ կոմիտեի և որևէ մշտական կամ ժամանակավոր ենթակոմիտեի հանդիպումները կարող են անցկացվել անձամբ կամ Կողմերի կողմից որոշված ցանկացած այլ միջոցով:

### ՀՈԴՎԱԾ 6.2. Հաղորդակցությունը

1. Կողմերից յուրաքանչյուրը նշանակում է կոնտակտային անձ՝ սույն

Համաձայնագրին վերաբերող ցանկացած հարցով Կողմերի միջև պաշտոնական հաղորդակցությունն ապահովելու և դյուրացնելու համար:

2. Սույն Համաձայնագրին առնչվող ամբողջ պաշտոնական հաղորդակցությունն իրականացվում է անգլերեն:

## ԳԼՈՒԽ 7
## ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

### ՀՈԴՎԱԾ 7.1. Հավելվածներ և ծանոթագրություններ

Սույն Համաձայնագրի հավելվածներն[8] ու ծանոթագրությունները կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

### ՀՈԴՎԱԾ 7.2. Փոփոխությունները

Ցանկացած Կողմ կարող է սույն Համաձայնագրում փոփոխություններ կատարելու համար առաջարկություններ ներկայացնել Համատեղ կոմիտե՝ վերջինիս կողմից քննարկման և առաջարկություններ ներկայացնելու համար:

1. Սույն Համաձայնագրում փոփոխությունները Համատեղ կոմիտեի կողմից առաջարկություն ներկայացվելուց հետո ուղարկվում են Կողմերին՝ տվյալ Կողմերի սահմանադրական պահանջներին կամ իրավական ընթացակարգերին համապատասխան վավերացման, ընդունման կամ հաստատման համար:

2. Սույն Համաձայնագրի փոփոխություններն ուժի մեջ են մտնում 7.5 հոդվածում նախատեսված նույն կարգով, եթե Կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ:

### ՀՈԴՎԱԾ 7.3. Միացումը

1. Ցանկացած պետություն կարող է միանալ սույն Համաձայնագրին այն պայմաններով, որոնք կարող են համաձայնեցվել Կողմերի և միացող պետության միջև՝ Կողմերի և միացող պետության կիրառելի իրավական պահանջներին ու ընթացակարգերին համապատասխան Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնեցումից և հաստատումից հետո:

2. Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնեցումը և հաստատումն իրականացվում է սույն Համաձայնագրի անբաժան մաս կազմող առանձին արձանագրության ձևով, որն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրով նախատեսված նույն ընթացակարգերին համապատասխան:

### ՀՈԴՎԱԾ 7.4. Գործողությունը և դադարեցումը

1. Սույն Համաձայնագիրը վավեր է անորոշ ժամկետով:

2. Ցանկացած Կողմ կարող է դադարեցնել սույն Համաձայնագիրը՝ մյուս Կողմին գրավոր ծանուցելով, և այդպիսի դադարեցումն ուժի մեջ է մտնում ծանուցման օրվանից

---

[8] Ավելի ստույգ, սույն Համաձայնագրի և Հավելվածների դրույթների միջև ցանկացած անհամապատասխանության դեպքում գերակայում են սույն Համաձայնագրի դրույթները, եթե Հավելվածում հստակորեն այլ բան նշված չէ:

Սույն Համաձայնագիրը կազմված է երկու բնօրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն: Բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման հետ կապված ցանկացած անհամապատասխանության դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

ԿԱՏԱՐՎԱԾ է Աբու Դաբի-ում 2026 թվականի փետրվարի 5-ին:

| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ | ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ |
| --- | --- |
|  |  |

## ՀԱՎԵԼՎԱԾ I
## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍՈՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑԱՆԿ

**ՆԵՐԱԾԱԿԱՆ ՆՇՈՒՄ**

1. Սույն փաստաթղթում սահմանվում են Արաբական Միացյալ Էմիրությունների (ԱՄԷ) Հատուկ հանձնառությունների ժամանակացանկը՝ համաձայն «Ծառայությունների և ներդրումների առևտրի մասին» ԱՄԷ-Հայաստան համաձայնագրի (ԾՆԱՀ) «Ծառայությունների առևտուրը» գլխի: Այս ներածական ծանոթագրությունը պետք է դիտարկվի որպես ԱՄԷ-ի ժամանակացանկի անբաժանելի մաս:

2. Ժամանակացանկը կազմվել է MTN.GNS/W/120 փաստաթղթում ներկայացված ծառայությունների ոլորտային դասակարգման ցանկի հիման վրա: ՀԱԴ կոդերին հղումները վերաբերում են Հիմնական ապրանքների ժամանակավոր դասակարգման մեջ օգտագործվող ՀԱԴ կոդերին (Վիճակագրական փաստաթղթերի M շարքի թիվ 77, Տնտեսական և սոցիալական հարցերի միջազգային վարչություն, Միավորված ազգերի կազմակերպության վիճակագրական բյուրո, Նյու Յորք, 1991 թվական) և նախատեսված են հանձնառությունների շրջանակը սահմանելու համար, եթե այլ բան նշված չէ:

| Ոլորտ կամ ենթաոլորտ | Շուկայի հասանելիության սահմանափակումներ | Ազգային ռեժիմի սահմանափակումներ | Լրացուցիչ մեկնաբանություններ |
|---|---|---|---|
| **Ի. ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| **ՍՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՑԱՆԿՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՈԼՈՐՏՆԵՐՆ ՈՒ ԵՆԹԱՈԼՈՐՏՆԵՐԸ**[9] | | | |
| | 3) Առևտրային ներկայությունն ապահովվում է՝<br>i) ներկայացուցչության կամ մասնաճյուղի միջոցով՝ առանց օտարերկրյա կապիտալի մասնակցության սահմանափակման (շնորհվում է 100% օտարերկրյա սեփականության իրավունք), կամ<br>ii) ստորև նշված կոնկրետ ոլորտներում սահմանված առավելագույն օտարերկրյա մասնակցություն ունեցող ընկերության գրանցման միջոցով, որը պետք է լինի ԱՄԷ օրենսդրությամբ թույլատրված իրավական ձևերից որևէ մեկով:<br>Որոշ կոնկրետ ոլորտների և ենթաոլորտների դեպքում առևտրային ներկայությունը կարող է պայմանավորված լինել | 3) Հողի և անշարժ գույքի ձեռքբերումը թույլատրված չէ օտարերկրացիներին կամ այն ընկերություններին, որոնցում օտարերկրյա քաղաքացիները բաժնեմաս ունեն: Այնուամենայնիվ, ԱՄԷ-ում գործունեություն ծավալելու թույլտվություն ունեցող օտարերկրյա ընկերությունները կարող են սեփականության իրավունքով ունենալ հող և անշարժ գույք միայն այնքանով, որքանով անհրաժեշտ է իրենց գործունեությունն իրականացնելու համար՝ Դաշնային և Էմիրությունների մակարդակներում անշարժ գույքի սեփականության իրավունքը կարգավորող օրենքների և կանոնակարգերի համաձայն թույլատրված կարգով և դրանց համապատասխան:<br>i) Կառավարության կողմից | - Ներ կորպորատիվ փոխադրվող ների կանանց/ամուսինների աշխատանքի իրավունքը շնորհվում է ԱՄԷ-ի աշխատանքային օրենսդրության համաձայն:<br>- Թափանցիկություն. աշխատանքի, բնակության և աշխատանքային թույլտվություններ մասով օրենքներին վերաբերող բոլոր գիտակարգերի հրապարակված են |

[9] ԱՄԷ-ն որևէ հանձնառություն չի ստանձնի էներգետիկայի և էներգետիկայի հետ կապված ծառայությունների ոլորտում: Այս առաջարկը չի ներառում այդ ծառայությունների մասով որևէ հանձնառություն:

| Ոլորտ կամ ենթաոլորտ | Շուկայի հասանելիության սահմանափակումներ | Ազգային ռեժիմի սահմանափակումներ | Լրացուցիչ մեկնաբանություններ |
|---|---|---|---|
| | տեխնոլոգիաների փոխանցման, Գիտահետազոտական և կոնստրուկտորական ծրագրերի, տեխնիկական աջակցության և տեղական մարդկային ռեսուրսների կրթության ու վերապատրաստման ձևով արտահայտվող առավելություններով:<br>iii) Ազատ գոտիներ՝ Ազատ գոտիներում թույլատրվում է 100% օտարերկրյա սեփականություն՝ ստորև նշված կոնկրետ ենթաոլորտներում սահմանված կարգով:<br>4) Առանց սահմանափակումների՝ բացառությամբ հետևյալ կատեգորիաներում ներառված ֆիզիկական անձանց մուտքի կամ ժամանակավոր կացության վերաբերյալ միջոցների:<br>**Ա. Բիզնես այցելուներ**<br>ԱՄԷ-ից վարձատրություն չստացող և հանրությանն ուղղակի վաճառք չիրականացնող կամ ծառայություններ չմատուցող, գործարար հանդիպումների, գործարար կապերի հաստատման, այդ թվում՝ ծառայությունների վաճառքի վերաբերյալ | սուբսիդավորված ծառայությունները կարող են վերաբերել միայն ԱՄԷ քաղաքացիներին:<br>ii) Օտարերկրյա քաղաքացիները կամ օտարերկրյա բաժնեմաս ունեցող ընկերությունները կարող են պարտավոր լինել վճարելու ուղղակի հարկեր ԱՄԷ-ում կատարած աշխատանքից կամ գործողություններից ստացված եկամտի համար, մինչդեռ տեղական ծառայություններ մատուցողները կամ ԱՄԷ տեղական ընկերությունները կարող են պարտավոր չլինել վճարելու նմանատիպ հարկեր՝ հաշվի առնելով ԾԱԳՀ-ի XIV հոդվածի «դ» պարբերության դրույթները:<br>4) Առանց սահմանափակումների՝ բացառությամբ շուկայի հասանելիությանն առնչվող սյունակում նշված ֆիզիկական անձանց կատեգորիաներին վերաբերող միջոցների: | |

| Ոլորտ կամ ենթաոլորտ | Շուկայի հասանելիության սահմանափակումներ | Ազգային ռեժիմի սահմանափակումներ | Լրացուցիչ մեկնաբանություններ |
|---|---|---|---|
| | բանակցությունների և (կամ) այլ նմանատիպ գործողությունների մասնակցելու, ինչպես նաև ԱՄԷ-ում առևտրային ներկայություն հաստատելու նախապատրաստման նպատակով ԱՄԷ-ում գտնվող ֆիզիկական անձ.<br>Այս կատեգորիայում ներառված անձանց մուտքը և կացությունը չպետք է լինի ավելի քան 90 օր ցանկացած 12-ամսյա ժամանակահատվածում:<br>**Բ. Ներկորպորատիվ փոխադրվողներ**<br>Ներկորպորատիվ փոխադրվողներ՝ կառավարիչներ, գործադիր տնօրեններ և մասնագետներ (ինչպես սահմանված է ստորև), որոնք ԱՄԷ մուտք գործելու դիմումի ամսաթվից առաջ առնվազն մեկ տարի ժամանակահատվածով աշխատել են ԱՄԷ-ից դուրս գտնվող մեկ այլ Կողմի իրավաբանական անձի կազմում և տեղափոխվում են վերոնշյալ իրավաբանական անձի ԱՄԷ-ում գտնվող մասնաճյուղ կամ դուստր ձեռնարկություն: Մուտքը | | |

| Ոլորտ կամ ենթաոլորտ | Շուկայի հասանելիության սահմանափակումներ | Ազգային ռեժիմի սահմանափակումներ | Լրացուցիչ մեկնաբանություններ |
|---|---|---|---|
| | կախված կլինի հետևյալ պայմաններից.<br>i) Կառավարիչների, գործադիր տնօրենների և մասնագետների թիվը սահմանափակվում է յուրաքանչյուր ծառայություն մատուցողի կառավարիչների, գործադիր տնօրենների և մասնագետների ընդհանուր թվի 50%-ի չափով.<br>ii) Նրանց մուտքը երեք տարի ժամկետով է՝ լրացուցիչ տարիներով երկարաձգման հնարավորությամբ.<br>iii) Նրանց կացությունն ԱՄԷ-ում կարգավորվում է ԱՄԷ աշխատանքի և ներգաղթի օրենքներով:<br>**<u>Սահմանումները</u>**<br><u>Կառավարիչներ.</u><br>կազմակերպությունում աշխատող անձինք, որոնք հիմնականում պատասխանատու են կազմակերպության կամ կազմակերպության որևէ վարչության կամ ստորաբաժանման ղեկավարման համար, վերահսկում են վերահսկման, մասնագիտական կամ կառավարչական | | |

| Ոլորտ կամ ենթաոլորտ | Շուկայի հասանելիության սահմանափակումներ | Ազգային ռեժիմի սահմանափակումներ | Լրացուցիչ մեկնաբանություններ |
|---|---|---|---|
| | գործառույթներ իրականացնող այլ աշխատակիցների աշխատանքը և հսկողություն են իրականացնում դրա նկատմամբ, ունեն անձամբ աշխատանքի ընդունելու կամ աշխատանքից ազատելու կամ աշխատանքի ընդունելու, աշխատանքից ազատելու առաջարկություն ներկայացնելու կամ անձնակազմի հետ կապված այլ գործողություններ (օրինակ՝ պաշտոնի բարձրացում կամ արձակուրդի թույլտվություն) կատարելու իրավասություն և իրականացնում են հայեցողական լիազորություններ առօրյա գործունեության նկատմամբ. դա չի վերաբերում վերահսկման գործառույթներ իրականացնող առաջին մակարդակի աշխատակիցներին, եթե վերահսկվող աշխատակիցները մասնագետներ չեն, ինչպես նաև այն աշխատակիցներին, որոնք հիմնականում կատարում են ծառայության մատուցման համար անհրաժեշտ առաջադրանքներ:<br><u>Գործադիր տնօրեններ.</u><br>Կազմակերպությունում աշխատող | | |

| Ոլորտ կամ ենթաոլորտ | Շուկայի հասանելիության սահմանափակումներ | Ազգային ռեժիմի սահմանափակումներ | Լրացուցիչ մեկնաբանություններ |
|---|---|---|---|
| | անձինք, որոնք հիմնականում պատասխանատու են կազմակերպության կառավարման համար, սահմանում են կազմակերպության նպատակներն ու քաղաքականությունը, իրականացնում են լայն լիազորություններ որոշումներ կայացնելու հարցում և ստանում են միայն ընդհանուր վերահսկողություն կամ ուղղորդում բարձրաստիճան ղեկավարների, տնօրենների խորհրդի կամ բիզնեսի բաժնետերերի կողմից: Գործադիր տնօրեններն ուղղակիորեն չեն կատարում առաջադրանքներ՝ կապված կազմակերպության ծառայության կամ ծառայությունների իրական մատուցման հետ:<br><u>Մասնագետներ.</u><br>կազմակերպությունում աշխատող անձինք, որոնք տիրապետում են տվյալ ոլորտին առնչվող բարձր մակարդակի գիտելիքների, ինչպես նաև կազմակերպության մատուցած ծառայությունների, | | |

| Ոլորտ կամ ենթաոլորտ | Շուկայի հասանելիության սահմանափակումներ | Ազգային ռեժիմի սահմանափակումներ | Լրացուցիչ մեկնաբանություններ |
|---|---|---|---|
| | գիտահետազոտական սարքավորումների, տեխնիկաների կամ կառավարման վերաբերյալ սեփականություն հանդիսացող գիտելիքների: | | |
| **II. ՈԼՈՐՏԻՆ ՀԱՏՈՒԿ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| 1. ԲԻԶՆԵՍ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
| Ա. <u>Մասնագիտական ծառայություններ</u><br>ա. Իրավաբանական ծառայություններ (ՀԱԴ 861)<br>Խորհրդատվություն այն իրավազորության իրավունքի վերաբերյալ, որտեղ ծառայություններ մատուցողը որակավորված է որպես իրավաբան, ինչպես նաև միջազգային իրավունքի վերաբերյալ (ՀԱԴ 861-ի մաս): | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 1) Չկան<br>2) Չկան<br>3) ԱՄԷ քաղաքացի չհանդիսացող իրավաբանները չեն կարող հանդես գալ ԱՄԷ դատարաններում կամ պաշտոնական մարմինների առջ կամ կատարել նոտարական գործառույթներ:<br>4) Սահմանափակումներ չկան բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| բ. Հաշվապահական, աուդիտորական և հաշվապահական հաշվառման ծառայություններ (ՀԱԴ 8621 և 8622) | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Օտարերկրյա մասնակցության չափը սահմանափակվում է 75%-ով: Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց 2 տարի հետո օտարերկրյա մասնակցությունը կթույլատրվի մինչ 100%-ի չափով | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |

| Ոլորտ կամ ենթաոլորտ | Շուկայի հասանելիության սահմանափակումներ | Ազգային ռեժիմի սահմանափակումներ | Լրացուցիչ մեկնաբանություններ |
|---|---|---|---|
| | 4) Սահմանափակումներ չկան բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | | |
| գ. Հարկային ծառայություններ (ՀԱԴ 8630)<br>Միայն հետ՛յալ ենթաոլորտները՝<br>- Բիզնեսի հարկային պլանավորում և խորհրդատվություն (ՀԱԴ 86301)<br>- Բիզնեսի հարկային հաշվետվությունների կազմման և վերանայման ծառայություններ (ՀԱԴ 86302) | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Օտարերկրյա մասնակցության չափը սահմանափակվում է 75%-ով:<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| դ. Ճարտարապետական ծառայություններ (ՀԱԴ 8671)<br>ե. Ճարտարագիտական ծառայություններ (ՀԱԴ 8672)<br>զ. Ինտեգրացված ճարտարագիտական ծառայություններ (ՀԱԴ 8673)<br>է. Քաղաքաշինական պլանավորման և քաղաքային լանդշաֆտային ճարտարապետական ծառայություններ (ՀԱԴ 8674) | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Օտարերկրյա մասնակցության չափը սահմանափակվում է 75%-ով:<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| ը. Բժշկական և ատամնաբուժական ծառայություններ (ՀԱԴ 9312) | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Օտարերկրյա մասնակցության չափը սահմանափակվում է 70%-ով:<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| թ. Անասնաբուժական ծառայություններ | 1) Չկան | 1) Չկան | |

| Ոլորտ կամ ենթաոլորտ | Շուկայի հասանելիության սահմանափակումներ | Ազգային ռեժիմի սահմանափակումներ | Լրացուցիչ մեկնաբանություններ |
|---|---|---|---|
| (ՀԱԴ 93201) | 2) Չկան<br>3) Օտարերկրյա մասնակցության չափը սահմանափակվում է 75%-ով:<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| Բ. <u>Համակարգչային և հարակից ծառայություններ</u><br>ա. Համակարգչային սարքավորումը տեղադրելու հետ կապված խորհրդատվական ծառայություններ (ՀԱԴ 841)<br>բ. Ծրագրային ապահովման ծառայություններ (ՀԱԴ 842)<br>գ. Տվյալների մշակման ծառայություններ (ՀԱԴ 843)<br>դ. Տվյալների բազայի հետ կապված ծառայություններ (ՀԱԴ 844)<br>ե. Գրասենյակային մեքենաների և սարքավորումների, այդ թվում՝ համակարգիչների սպասարկման և վերանորոգման ծառայություններ (ՀԱԴ 845)<br>զ. Այլ համակարգչային ծառայություններ (ՀԱԴ 849) | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| Գ. <u>Գիտահետազոտական և կոնստրուկտորական ծառայություններ</u><br>ա. Բնական գիտությունների ոլորտում հետազոտությունների և մշակումների | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ | |

| Ոլորտ կամ ենթաոլորտ | Շուկայի հասանելիության սահմանափակումներ | Ազգային ռեժիմի սահմանափակումներ | Լրացուցիչ մեկնաբանություններ |
|---|---|---|---|
| ծառայություններ (ՀԱԴ 851)<br>բ. Հումանիտար և սոցիալական գիտությունների ոլորտում հետազոտությունների և մշակումների ծառայություններ (ՀԱԴ 852)<br>գ. Միջգիտակարգային հետազոտությունների և մշակումների ծառայություններ (ՀԱԴ 853) | բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| Դ. Վարձույթի և լիզինգի ծառայություններ՝ առանց օպերատորի (բացառությամբ ավտոմեքենաների վարձակալության և լիզինգի ծառայությունների)<br>ա. Նավերի մասով (ՀԱԴ 83103)<br>բ. Այլ տրանսպորտային սարքավորումների մասով (ՀԱԴ 83101 + 83102 + 83105)<br>գ. Այլ մեքենաների և սարքավորումների մասով (ՀԱԴ 83106 – 83109) | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Օտարերկրյա մասնակցության չափը սահմանափակվում է 70%-ով:<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| Ե. <u>Այլ բիզնես ծառայություններ</u><br>ա. Գովազդային ծառայություններ (ՀԱԴ 871) | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Օտարերկրյա մասնակցության չափը սահմանափակվում է 70%-ով:<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| բ. Շուկայի հետազոտության և հանրային | 1) Չկան | 1) Չկան | |

| Ոլորտ կամ ենթաոլորտ | Շուկայի հասանելիության սահմանափակումներ | Ազգային ռեժիմի սահմանափակումներ | Լրացուցիչ մեկնաբանություններ |
|---|---|---|---|
| կարծիքի հարցման ծառայություններ (ՀԱԴ 864) | 2) Չկան<br>3) Օտարերկրյա մասնակցության չափը սահմանափակվում է 75%-ով: Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց 2 տարի հետո օտարերկրյա մասնակցությունը կթույլատրվի մինչ և 100%-ի չափով:<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| գ. Կառավարման հարցերով խորհրդատվական ծառայություններ (ՀԱԴ 8650)<br>դ. Կառավարման հարցերով խորհրդատվության հետ կապված ծառայություններ (ՀԱԴ 8660)<br>ե. Տեխնիկական փորձարկման և վերլուծության ծառայություններ (ՀԱԴ 8676) | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| զ. Արտադրության հետ կապված ծառայություններ (ՀԱԴ 884+885՝ բացառությամբ 88442-ի) | 1) Սահմանափակումներ չկան<br>2) Չկան<br>3) Օտարերկրյա մասնակցության չափը սահմանափակվում է 75%-ով: Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց 2 տարի հետո օտարերկրյա մասնակցությունը կթույլատրվի մինչև 100%-ի չափով:<br>4) Սահմանափակումներ չկան՝ | 1) Սահմանափակումներ չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |

| Ոլորտ կամ ենթաոլորտ | Շուկայի հասանելիության սահմանափակումներ | Ազգային ռեժիմի սահմանափակումներ | Լրացուցիչ մեկնաբանություններ |
|---|---|---|---|
| | բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | | |
| է. Գիտական և տեխնիկական խորհրդատվության հետ կապված ծառայություններ (ՀԱԴ 8675) | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| ը. Սարքավորումների տեխնիկական սպասարկում և վերանորոգում (բացառությամբ ծովային նավերի, օդանավերի կամ այլ տրանսպորտային սարքավորումների) (ՀԱԴ 633+ 8861- 8866) | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 1) Սահմանափակումներ չկան<br>2) Սահմանափակումներ չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| թ. Շենքերի մաքրման ծառայություններ (ՀԱԴ 874) | 1) Սահմանափակումներ չկան<br>2) Սահմանափակումներ չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 1) Սահմանափակումներ չկան<br>2) Չկան<br>3) Սահմանափակումներ չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| ժ. Լուսանկարչական ծառայություններ (ՀԱԴ 8750) | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Սահմանափակումներ չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| ի. Փաթեթավորման ծառայություններ (ՀԱԴ 8760) | 1) Չկան<br>2) Չկան | 1) Չկան<br>2) Չկան | |

| Ոլորտ կամ ենթաոլորտ | Շուկայի հասանելիության սահմանափակումներ | Ազգային ռեժիմի սահմանափակումներ | Լրացուցիչ մեկնաբանություններ |
|---|---|---|---|
| | 3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| լ. Տպագրության և հրատարակչության ծառայություններ (ՀԱԴ 88442) | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Օտարերկրյա մասնակցության չափը սահմանափակվում է մինչև 70%-ով:<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| խ. Ժողովների հետ կապված ծառայություններ (ՀԱԴ 87909)* | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Օտարերկրյա մասնակցության չափը սահմանափակվում է 70%-ով:<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| ծ. Այլ (ՀԱԴ 8790) | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Օտարերկրյա մասնակցության չափը սահմանափակվում է 75%-ով: ՀԱԴ 87905-ի համար չկան:<br>4) Սահմանափակումներ չկան | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան | |

* Հետևյալ նշանը՝ (*), ցույց է տալիս, որ նշված ծառայությունը դասակարգման ցանկում որևէ տեղ նշված՝ ՀԱԴ-ի ավելի ընդհանուր տարրի բաղադրիչ է:

| Ոլորտ կամ ենթաոլորտ | Շուկայի հասանելիության սահմանափակումներ | Ազգային ռեժիմի սահմանափակումներ | Լրացուցիչ մեկնաբանություններ |
|---|---|---|---|
| Մակերևույթի ուսումնասիրության ծառայություններ (ՀԱԴ V1.1 8353)<br>Քարտեզագրման ծառայություններ (ՀԱԴ V1.1 8354) | 1) Սահմանափակումներ չկան<br>2) Սահմանափակումներ չկան<br>3) Օտարերկրյա մասնակցության չափը սահմանափակվում է 49%-ով և ենթակա է ԱՄԷ իրավասու մարմինների հաստատմանը:<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 1) Սահմանափակումներ չկան<br>2) Սահմանափակումներ չկան<br>3) Սահմանափակումներ չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| 2. ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | |
| Ա. Փոստային կապի ծառայություններ (ՀԱԴ 7511)<br>Միայն փաստաթղթերի, նամակների և ծանրոցների մշակում | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Օտարերկրյա մասնակցության չափը սահմանափակվում է 49%-ով:<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| Բ. Սուրհանդակային ծառայություններ (ՀԱԴ 7512) | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Օտարերկրյա մասնակցության չափը սահմանափակվում է 49%-ով:<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | 1) Չկան<br>2) Չկան<br>3) Չկան<br>4) Սահմանափակումներ չկան՝ բացառությամբ հորիզոնական հատվածում նշվածների: | |
| Գ. Հեռահաղորդակցության ծառայություններ | | | |
| **ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝**<br>Ստանձնած հանձնառությունները հիմնված են ԱՀԿ հետևյալ փաստաթղթերով նախատեսված՝ ժամանակացույցը կազմելու սկզբունքների վրա. «Հեռահաղորդակցության հիմնական ծառայությունների առնչությամբ հանձնառությունների ժամանակացույցը կազմելու վերաբերյալ | | | |

| Ոլորտ կամ ենթաոլորտ | Շուկայի հասանելիության սահմանափակումներ | Ազգային ռեժիմի սահմանափակումներ | Լրացուցիչ մեկնաբանություններ |
|---|---|---|---|
ա) ոչ խտրական ժամկետներով, պայմաններով (ներառյալ տեխնիկական ստանդարտները և մասնագրերը) և դրույքաչափով, ինչպես նաև այնպիսի որակով, որը պակաս բարենպաստ չէ, քան այն, որը տրամադրվում է իր կողմից տրամադրվող նույնատիպ ծառայությունների համար, կամ իրար հետ չփոխկապակցված ծառայություններ մատուցող օպերատորների կողմից տրամադրվող նույնատիպ ծառայությունների կամ էլ դրանց դուստր ձեռնարկությունների կամ այլ փոխկապակցված անձանց համար.

բ) ժամանակին, այնպիսի ժամկետներով, պայմաններով (ներառյալ տեխնիկական ստանդարտները և մասնագրերը) և ծախսերի վրա հիմնված դրույքաչափով, որոնք թափանցիկ են, ողջամիտ, հաշվի են առնում տնտեսական իրագործելիությունը և բավարար չափով տարանջատված են այնպես, որ օպերատորը կարիք չունենա վճարելու այն ցանցային տարրերի կամ հարմարությունների համար, որոնք մատուցվող ծառայության համար չեն պահանջվում, և

գ) պահանջի դեպքում՝ օգտագործողների մեծ մասին առաջարկվող ցանցային վերջնակետերից բացի այն կետերում, որոնց համար վճարվում են այնպիսի գումարներ, որոնք ներառում են անհրաժեշտ օժանդակ հարմարություններ կառուցելու ծախսը:

**2.3. Փոխկապակցման հետ կապված բանակցությունների ընթացակարգերի հրապարակումը**

Հրապարակվում են խոշոր օպերատորի նկատմամբ կիրառելի փոխկապակցման ընթացակարգերը:

**2.4. Փոխկապակցման հետ կապված պայմանավորվածությունների թափանցիկությունը**

Ապահովվում է, որ խոշոր օպերատորները հրապարակեն կա՛մ իրենց փոխկապակցման համաձայնագրերը, կա՛մ փոխկապակցման իրենց օրինակելի առաջարկները:

**2.5. Փոխկապակցում. վեճերի կարգավորումը**

Խոշոր մատակարարի հետ փոխկապակցման պահանջ ներկայացնող ծառայություն մատուցողը կարող է դիմել հետևյալ դեպքերում.

ա) ցանկացած ժամանակ, կամ

բ) ողջամիտ ժամկետում

փոխկապակցման համար համապատասխան պայմանների, դրույթների և

սակագների վերաբերյալ վեճերը լուծելու համար սահմանված ողջամիտ ժամկետի ավարտից հետո, որի մասին հրապարակայնորեն հաղորդվել է անկախ ներպետական մարմնին, որը կարող է լինել ստորև՝ 5-րդ պարբերության մեջ նշված կարգավորող մարմինը, այնքանով, որքանով դրանք նախկինում սահմանված չեն եղել:

**3. Համընդհանուր ծառայությունը**

Յուրաքանչյուր անդամ իրավունք ունի սահմանելու համընդհանուր ծառայություն մատուցելու պարտավորության այն տեսակը, որը ցանկանում է ունենալ: Այդ պարտավորությունները per se չեն համարվում հակամրցակցային՝ պայմանով, որ դրանք կիրառվեն թափանցիկ, ոչ խտրական և մրցակցության նկատմամբ չեզոք ձևով, ինչպես նաև չլինեն ավելի ծանրաբեռնող, քան անհրաժեշտ է անդամի սահմանած համընդհանուր ծառայության տեսակի համար:

**4. Լիցենզավորման չափանիշների հրապարակումը**

Լիցենզիա պահանջվելու դեպքում հրապարակվում է հետևյալը.

ա) լիցենզավորման բոլոր չափանիշները և լիցենզիայի համար ներկայացված դիմումի հետ կապված որոշում կայացնելու համար սովորաբար պահանջվող ժամանակահատվածի մասին տեղեկություն, և

բ) առանձին լիցենզիաների տրամադրման պայմանները:

Լիցենզիա տրամադրելը մերժելու պատճառները գրավոր տրամադրվում են դիմումատուին այդպիսի պահանջ ներկայացվելու դեպքում:

**5. Անկախ կարգավորողներ**

Կարգավորող մարմինն առանձին է հեռահաղորդակցության հիմնական ծառայություններ մատուցողից և հաշվետու չէ նրան: Կարգավորող մարմնի որոշումները և դրա կողմից կիրառվող ընթացակարգերը պետք է անկողմնակալ լինեն շուկայի բոլոր մասնակիցների համար:

**6. Սահմանափակ ռեսուրսների բաշխումը և օգտագործումը**

Սահմանափակ ռեսուրսների, այդ թվում՝ հաճախականությունների, թվերի և սերվիտուտի բաշխման և դրանք օգտագործելու ցանկացած ընթացակարգ իրականացվում է օբյեկտիվ, ժամանակին, թափանցիկ և ոչ խտրական ձևով: Բաշխված հաճախականությունների միջակայքերի ընթացիկ իրավիճակի մասին տեղեկությունները ենթակա են հրապարակման, իսկ Կառավարության կողմից առանձին նպատակներով օգտագործման համար բաշխված հաճախականությունների վերաբերյալ մանրամասների հրապարակում չի պահանջվում:

## ՀԱՎԵԼՎԱԾ III
## ԱՄԷ-Ի ԱԱԲՌ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

| **Ոլորտ կամ ենթաոլորտ** | **Միջոցի նկարագրություն, որով մատնանշվում է դրա անհամապատասխանությունը 2.4 հոդվածին** | **Երկրներ, որոնց նկատմամբ կիրառվում է միջոցը** | **Նախատեսված տևողություն** | **Բացառությունը կիրառելու անհրաժեշտություն ստեղծող պայմաններ** |
|---|---|---|---|---|
| Ֆինանսական ծառայություններ | Օտարերկրյա ֆինանսական ծառայություններ մատուցողների (ներառյալ բանկերը և ապահովագրական ընկերությունները) մուտքի/հիմնադրման/գործունեության թույլտվությունը և նոր մասնաճյուղերի բացումը կախված կլինեն իրավասու մարմինների որոշումից: | Բոլոր երկրները | Անժամկետ | ԱՄԷ-ն փոքր և արդեն հագեցած շուկա է: ԱՄԷ-ի համար փոխադարձաբար շահավետ օգուտներ ստանալու նպատակով կարող է անհրաժեշտ լինել արտոնյալ ռեժիմի տրամադրում՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար: |

## ՀԱՎԵԼՎԱԾ IV
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԱԲՌ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

| **Ենթաոլորտ** | **Միջոցի նկարագրություն, որով մատնանշվում է դրա անհամապատասխանությունը 2.4 հոդվածին** | **Երկրներ, որոնց նկատմամբ կիրառվում է միջոցը** | **Նախատեսված տևողություն** | **Բացառությունը կիրառելու անհրաժեշտություն ստեղծող պայմաններ** |
|---|---|---|---|---|
| Ճանապարհային փոխադրման ծառայություններ (բեռների փոխադրում) (ՀԱԴ 7123)<br>Ճանապարհային փոխադրման ծառայություններ (ուղևորների փոխադրում) (ՀԱԴ 7121+7122)<br>Տեսալսողական ծառայություններ. - Շարժանկարների և հեռուստահաղորդումների արտադրություն և տարածում<br>Տեսալսողական ծառայություններ. Հեռուստահաղորդումների և շարժանկարների արտադրություն և տարածում | Երկկողմ միջազգային ճանապարհատրանսպորտային համաձայնագրերի համաձայն՝ այլ պայմանավորվող կողմերում գրանցված փոխադրողների կողմից ապրանքների փոխադրումը Հայաստան և Հայաստանի տարածքում ազատվում է ընդհանուր օգտագործման ճանապարհների շահագործման և պահպանման, ինչպես նաև մուտքի արտոնագրի տրամադրման մասով հարկերից և գանձումներից:<br>Երկկողմ միջազգային ճանապարհատրանսպորտային համաձայնագրերի համաձայն՝ այլ պայմանավորվող կողմերում գրանցված փոխադրողների կողմից ուղևորների փոխադրումը Հայաստան և Հայաստանի տարածքում ազատվում է ընդհանուր օգտագործման ճանապարհների շահագործման և պահպանման, ինչպես նաև մուտքի | Վրաստան, Իրան, Լիբանան, Թուրքմենստան, Կիպրոս, Ռուսաստան, Լատվիա, Սիրիա, Բուլղարիա, Ռումինիա, Ուկրաինա, Բելառուս, Ղրղզստանի Հանրապետություն<br>Վրաստան, Լիբանան, Ռուսաստան, Լատվիա, Սիրիա, Բուլղարիա, Ռումինիա, Ուկրաինա, Բելառուս, Ղրղզստանի Հանրապետություն<br>Երկրներ, որոնց համար ուժի մեջ են այդպիսի երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր՝ | Անժամկետ<br>Անժամկետ<br>Կախված համապատասխան համաձայնագրի գործողության ժամկետից:<br>Անժամկետ<br>Կոնկրետ երկրների համար հարկերից ազատում անհրաժեշտ է միայն մինչև տնտեսական ինտեգրման համաձայնագիր կնքելը կամ դրա ավարտը: | Անհրաժեշտ է պահպանել փոխադարձ ռեժիմի կիրառման հնարավորությունը՝ այլ տարածքներում բեռնատարային ծառայությունների հայ մատակարարների համար բավարար պայմաններ ապահովելու համար:<br>Անհրաժեշտ է պահպանել փոխադարձ ռեժիմի կիրառման հնարավորությունը՝ այլ տարածքներում ուղևորափոխադրման ծառայությունների հայ մատակարարների համար բավարար պայմաններ ապահովելու համար: |

| Ենթաոլորտ | Միջոցի նկարագրություն, որով մատնանշվում է դրա անհամապատասխանությունը 2.4 հոդվածին | Երկրներ, որոնց նկատմամբ կիրառվում է միջոցը | Նախատեսված տևողություն | Բացառությունը կիրառելու անհրաժեշտություն ստեղծող պայմաններ |
|---|---|---|---|---|
| | արտոնագրի տրամադրման մասով հարկերից և գանձումներից: Տեսալսողական ստեղծագործությունների համատեղ արտադրության մասին համաձայնագրի վրա հիմնված միջոցներ, որոնցով այդ համաձայնագրով կարգավորվող տեսալսողական ստեղծագործությունների համար ապահովվում է ազգային ռեժիմ: Միջոցներ, որոնցով տեսալսողական ստեղծագործությունների և այդպիսի ստեղծագործությունների մատակարարների համար աջակցման ծրագրերից (օրինակ՝ «EURIMAGES») ստացվող օգուտ է ապահովվում՝ եվրոպական ծագման կոնկրետ չափորոշիչների բավարարման պայմանով | ներկայում կամ հետագայում Եվրոպական երկրներ | | Համապատասխան երկրների միջև մշակութային կապերը խթանելու նպատակով Այս հաղորդումներն ուղղված են եվրոպական այն երկրների տարածաշրջանային ինքնության պահպանմանը և զարգացմանը, որոնք ունեն երկարատև մշակութային կապեր: |

## ՀԱՎԵԼՎԱԾ V
## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գործողության շրջանակը և սահմանումները

ա) Սույն հավելվածը վերաբերում է ֆինանսական ծառայությունների մատուցմանը վերաբերող միջոցներին: Սույն հավելվածում ֆինանսական ծառայության մատուցմանը հղումը նշանակում է՝ ծառայության մատուցում՝ 2-րդ գլխի (Ծառայությունների առևտուր) 2.1 հոդվածով (Սահմանումներ) սահմանված կարգով:

բ) 2-րդ գլխի (Ծառայությունների առևտուր) 2.2 հոդվածի (Ընդգրկման շրջանակ) «բ» ենթակետի նպատակներով «պետական իշխանության լիազորություններ իրականացնելիս մատուցված ծառայություններ» նշանակում է հետևյալը.

i) կենտրոնական բանկի կամ ֆինանսական մարմնի կամ որևէ այլ հանրային սուբյեկտի կողմից դրամավարկային կամ արժույթի կարգավորման ոլորտներում իրականացվող գործունեություն.

ii) սոցիալական ապահովագրության կամ պետական կենսաթոշակային ծրագրերի օրենսդրական համակարգի մաս կազմող գործունեություն, և

iii) հանրային սուբյեկտների կողմից Կառավարության ֆինանսական միջոցների հաշվին կամ դրանց երաշխիքով կամ դրանք օգտագործելով իրականացվող այլ գործունեություն:

գ) 2-րդ գլխի (Ծառայությունների առևտուր) 2.2 հոդվածի (Ընդգրկման շրջանակը) «բ» ենթակետի նպատակներով, եթե Կողմը թույլ է տալիս, որ սույն պարբերության «բ»(ii) կամ «բ»(iii) ենթապարբերություններում նշված գործունեության տեսակներից որևէ մեկն իրականացվի իր ֆինանսական ծառայություններ մատուցողների կողմից հանրային սուբյեկտների կամ ֆինանսական ծառայություններ մատուցողի հետ մրցակցության պայմաններում, ապա «ծառայությունները» ներառում է գործունեության այդ տեսակը:

դ) 2-րդ գլխի (Ծառայությունների առևտուր) 2.1 հոդվածի (Սահմանումներ) «ա» ենթապարբերությունը չի կիրառվում սույն հավելվածում ընդգրկված ծառայությունների նկատմամբ:

**2. Ներպետական կարգավորումը**

ա) Չնայած 2-րդ գլխի (Ծառայությունների առևտուրը) այլ դրույթների՝ ոչինչ չի կարող խոչընդոտել Կողմին ձեռնարկել միջոցներ ողջամիտ նպատակներով, այդ թվում՝ ներդրողների, ավանդատուների, ապահովագրված անձանց կամ այն անձանց պաշտպանության նպատակներով, որոնց նկատմամբ ֆինանսական ծառայություն մատուցողը կրում է ֆիդուցիար պատասխանատվություն, կամ ֆինանսական համակարգի ամբողջականության և կայունության ապահովման նպատակներով: Եթե այդ միջոցները հակասում են 2-րդ գլխի (Ծառայությունների առևտուրը) դրույթներին, ապա դրանք չեն կարող օգտագործվել որպես 2-րդ գլխի (Ծառայությունների առևտուրը) համաձայն Կողմի ստանձնած հանձնառություններից կամ պարտականություններից խուսափելու միջոց:

բ) 2-րդ գլխում (Ծառայությունների առևտուրը) նշված ոչինչ չպետք է

մեկնաբանվի այնպես, որ Կողմից պահանջվի բացահայտել անհատ սպառողների գործերի կամ հաշիվների վերաբերյալ տեղեկություններ կամ հանրային սուբյեկտների տիրապետության տակ գտնվող որևէ գաղտնի կամ ծառայողական տեղեկություն:

**3. Ճանաչումը**

ա) Կողմը կարող է ճանաչել ցանկացած այլ երկրի կողմից ներկայացված ողջամիտ պատճառներն այն բանը որոշելիս, թե ինչպես պետք է կիրառվեն Կողմի ֆինանսական ծառայությունների վերաբերյալ միջոցները: Այդ ճանաչումը, որին կարելի է հասնել ներդաշնակեցման կամ այլ ձևով, կարող է հիմնված լինել տվյալ երկրի հետ համաձայնության կամ պայմանավորվածության վրա կամ կարող է համաձայնեցվել ինքնուրույն:

բ) Կողմը, որը «ա» ենթապարբերությունում նշված նման համաձայնագրի կամ պայմանավորվածության կողմ է, լինի ապագա, թե ներկա, պետք է մյուս Կողմին տրամադրի բավարար հնարավորություն՝ վարելու բանակցություններ նման համաձայնագրերին կամ պայմանավորվածություններին միանալու կամ վարելու բանակցություններ դրանց հետ համադրելի համաձայնագրերին կամ պայմանավորվածություններին միանալու շուրջ, այնպիսի հանգամանքներում, որոնց դեպքում գոյություն կունենար համարժեք կարգավորում, վերահսկողություն, նման կարգավորման իրականացում և անհրաժեշտության դեպքում՝ համաձայնագրի կամ պայմանավորվածության կողմերի միջև տեղեկությունների փոխանակմանն առնչվող ընթացակարգեր: Եթե Կողմը ճանաչում է տրամադրում ինքնուրույն, ապա այն պետք է մյուս Կողմին տրամադրի բավարար հնարավորություն՝ ապացուցելու, որ նման հանգամանքներ գոյություն ունեն:

**4. Վեճերի կարգավորումը**

Ողջամտության և այլ ֆինանսական հարցերի վերաբերյալ վեճերի կարգավորման նպատակով ստեղծված կոլեգիաները պետք է ունենան վեճի առարկա հանդիսացող կոնկրետ ֆինանսական ծառայությանը վերաբերող անհրաժեշտ փորձ:

**5. Սահմանումները**

Սույն հավելվածի նպատակներով՝

ա) «ֆինանսական ծառայությունը» ֆինանսական բնույթի ցանկացած ծառայություն է, որն առաջարկում է Կողմի ֆինանսական ծառայություն մատուցողը: Ֆինանսական ծառայությունների մեջ մտնում են ապահովագրական և ապահովագրությանն առնչվող բոլոր ծառայությունները, ինչպես նաև բանկային և մյուս բոլոր ֆինանսական ծառայությունները (բացի ապահովագրությունից): Ֆինանսական ծառայությունները ներառում են հետևյալ գործողությունները.

*Ապահովագրական և ապահովագրությանն առնչվող ծառայություններ*

i) ուղղակի ապահովագրությունը (ներառյալ համասապահովագրությունը)՝

ա) կյանքի,

բ) ոչ կյանքի,

ii) վերաապահովագրությունը և ռետրոցեսիան,

iii) ապահովագրական միջնորդությունը, ինչպես օրինակ՝ բրոքերությունն ու գործակալությունը,

iv) ապահովագրությանն օժանդակ ծառայությունները, ինչպես օրինակ՝ խորհրդատվական, ակտուարային, ռիսկերի գնահատման և պահանջների կառավարման ծառայությունները:

Բանկային և այլ ֆինանսական ծառայություններ (բացի ապահովագրությունից)

v) հանրությունից ավանդների և վերադարձման ենթակա այլ միջոցների ընդունում,

vi) բոլոր տեսակի փոխատվությունների տրամադրում, այդ թվում՝ սպառողական վարկեր, հիպոթեքային վարկեր, ֆակտորինգ և առևտրային գործարքների ֆինանսավորում,

vii) ֆինանսական լիզինգ,

viii) վճարման և դրամական փոխանցումների բոլոր ծառայությունները, այդ թվում՝ վարկային, վճարային և դեբետային քարտեր, ճամփորդական չեկեր և բանկային վճարագրեր,

ix) երաշխիքներ և հանձնառություններ,

x) հետևյալի առուվաճառքը՝ իր հաշվին կամ հաճախորդների հաշվին, բորսայում, արտաբորսայական շուկայում կամ այլ կերպ.

Ա) դրամական շուկայի գործիքներ (այդ թվում՝ չեկեր, մուրհակներ, ավանդային հավաստագրեր),

Բ) արտարժույթ,

Գ) ածանցյալ գործիքներ՝ ներառելով ֆյուչերսներն ու օպցիոնները, սակայն չսահմանափակվելով դրանով,

Դ) փոխարժույթի և տոկոսադրույքի հետ կապված գործիքներ, այդ թվում՝ այնպիսի գործիքներ, ինչպիսիք են սվոփները, դրույքաչափի վերաբերյալ ֆորվարդային համաձայնագրերը,

Ե) փոխանցելի արժեթղթեր,

Զ) այլ փոխանցելի գործիքներ և ֆինանսական ակտիվներ, այդ թվում՝ ձուլածո.

xi) արժեթղթերի բոլոր տեսակների թողարկմանը մասնակցությունը, ներառյալ երաշխավորմանը և տեղաբաշխմանը՝ որպես գործակալ (հանրային կամ մասնավոր) մասնակցությունը և այդպիսի թողարկման հետ կապված ծառայությունների տրամադրումը,

xii) դրամական միջնորդությունը,

xiii) ակտիվների կառավարումը, ինչպես օրինակ՝ կանխիկ միջոցների կամ պորտֆելի կառավարումը, կոլեկտիվ ներդրումների կառավարման բոլոր տեսակները, կենսաթոշակային ֆոնդի կառավարումը, պահառության, դեպոզիտար և տրաստային ծառայությունները,

xiv) ֆինանսական ակտիվների, այդ թվում՝ արժեթղթերի, ածանցյալ գործիքների և այլ փոխանցելի գործիքների համար վճարային և քլիրինգային ծառայությունները,

xv) ֆինանսական տվյալների տրամադրումն ու փոխանցումը, ինչպես նաև ֆինանսական այլ ծառայություններ մատուցողների կողմից ֆինանսական տվյալների մշակումը և հարակից ծրագրային ապահովումը,

xvi) խորհրդատվական, միջնորդային և այլ օժանդակ ֆինանսական ծառայություններ՝ v-ից մինչև xv ենթապարբերություններում նշված բոլոր գործողությունների առնչությամբ, ներառյալ վարկային տեղեկատվությունն ու վերլուծությունը, ներդրումների և պորտֆելի վերաբերյալ ուսումնասիրությունն ու խորհրդատվությունը, ձեռքբերման, կորպորատիվ վերակազմակերպման և ռազմավարության վերաբերյալ խորհրդատվությունը.

բ) «ֆինանսական ծառայություն մատուցող» նշանակում է՝ Կողմի ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը ցանկանում է մատուցել կամ մատուցում է ֆինանսական ծառայություններ, սակայն «ֆինանսական ծառայություն մատուցող» եզրույթը չի ներառում հանրային սուբյեկտներին.

գ) «հանրային սուբյեկտ» նշանակում է՝

i) Կողմի Կառավարություն, կենտրոնական բանկ կամ ֆինանսական մարմին, կամ Կողմի սեփականությունը հանդիսացող կամ դրա հսկողության ներքո գործող սուբյեկտ, որը, ըստ էության, իրականացնում է Կառավարության գործառույթներ կամ կառավարության նպատակներով գործունեություն, բացառությամբ այն սուբյեկտի, որը, ըստ էության, առևտրային պայմաններով ֆինանսական ծառայություններ է մատուցում, կամ

ii) մասնավոր սուբյեկտ, որն այդ գործառույթները կատարելիս իրականացնում է սովորաբար կենտրոնական բանկի կամ ֆինանսական մարմնի կողմից իրականացվող գործառույթներ:

## ՀԱՎԵԼՎԱԾ VI
## ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ՀՈԴՎԱԾ 1. Գործողության ոլորտը և սահմանումները**

1. Սույն հավելվածը տարածվում է Կողմերի իրականացրած այն միջոցների վրա, որոնք վերաբերում են հեռահաղորդակցության ոլորտում ծառայությունների առևտրին[17]: Այն չի կիրառվում ռադիո կամ հեռուստատեսային ծրագրերի հեռարձակման կամ մալուխային տարածման հետ կապված միջոցների նկատմամբ[18]:

2. Սույն հավելվածում ոչինչ չի մեկնաբանվում այնպես, որ՝

ա) պահանջվի Կողմից ստիպելու ցանկացած ձեռնարկության ստեղծել, կառուցել, ձեռք բերել, վարձակալել, շահագործել կամ տրամադրել հեռահաղորդակցության ցանցեր կամ ծառայություններ, եթե նման ցանցերը կամ ծառայությունները լայնորեն չեն առաջարկվում հանրությանը,

բ) պահանջվի Կողմից ստիպելու բացառապես ռադիո կամ հեռուստատեսային ծրագրերի հեռարձակմամբ կամ մալուխային տարածմամբ զբաղվող ցանկացած ձեռնարկության հանրամատչելի դարձնել իր հեռարձակման կամ մալուխային հնարավորությունները որպես հանրային հեռահաղորդակցության ցանց, կամ

գ) խոչընդոտի Կողմին արգելելու մասնավոր ցանցեր շահագործող անձանց օգտագործել իրենց ցանցերը՝ երրորդ կողմերին հանրային հեռահաղորդակցության ցանցեր կամ ծառայություններ մատուցելու համար:

3. Սույն հավելվածի նպատակով՝

**«կարգավորող մարմին»** նշանակում է՝ այն մարմինը կամ մարմինները, որոնց վերապահված է սույն հավելվածում նշված հարցերի մասով նախատեսված ցանկացած կարգավորող առաջադրանքի կատարում.

**«էական հարմարություններ»** նշանակում է՝ հանրային հեռահաղորդակցության ցանցի կամ ծառայության հարմարություններ, որոնք՝

ա) բացառապես կամ առավելապես մատուցվում են մեկ կամ սահմանափակ թվով մատակարարների կողմից, և

բ) ծառայություն մատուցելու նպատակով չեն կարող տնտեսապես կամ տեխնիկապես փոխարինվել.

**«խոշոր օպերատոր»** նշանակում է՝

ա) ԱՄԷ-ի համար՝ հետևյալի արդյունքում հեռահաղորդակցության հիմնական ծառայությունների համապատասխան շուկայում մասնակցության պայմանների վրա (հաշվի առնելով գինը և մատակարարումը) էականորեն ազդելու կարողություն ունեցող մատակարարը.

i. էական հարմարությունների նկատմամբ հսկողություն, կամ

---

[17] **«Հեռահաղորդակցության ոլորտում ծառայությունների առևտուրը»** պետք է հասկանալ 2.1 հոդվածում (Սահմանումներ) պարունակվող սահմանումներին համապատասխան, ինչպես նաև ներառում է հանրային հեռահաղորդակցության ցանցերի ու ծառայությունների հասանելիության և դրանց օգտագործման վերաբերյալ միջոցները:

[18] **«Հեռարձակում»** եզրույթը սահմանվում է յուրաքանչյուր Կողմի համապատասխան ներպետական օրենսդրությամբ նախատեսված կարգով:

ii. շուկայում իր դիրքի օգտագործում:

բ) Հայաստանի Հանրապետության համար **«խոշոր մատակարար»** նշանակում է՝ գերիշխող օպերատոր, այսինքն՝ օպերատոր, որը Կարգավորող մարմնի կողմից ճանաչվել է որպես գերիշխող օպերատոր հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման ոլորտում.

**«հանրային հեռահաղորդակցության ցանց»** նշանակում է՝ հանրային հեռահաղորդակցության ենթակառուցվածք, որը հնարավորություն է տալիս հեռահաղորդակցություն ապահովելու ցանցային վերջնակետերի միջև.

**«հանրային հեռահաղորդակցության ծառայություն»** նշանակում է՝ հեռահաղորդակցության ցանկացած ծառայություն, որը Կողմն ուղղակիորեն կամ ըստ էության պահանջում է, որ հասանելի լինի հանրությանը: Այդպիսի ծառայությունները կարող են ներառել, *inter alia*, հեռագիրը, հեռախոսը, տելեքսը և տվյալների փոխանցումը, որը սովորաբար ներառում է երկու կամ ավելի կետերի միջև հաճախորդի կողմից մատակարարվող տեղեկությունների փոխանցումն իրական ժամանակում՝ առանց հաճախորդի տեղեկությունների ձևի որևէ փոփոխության վերջնակայանների միջև.

**«փոխկապակցում»** նշանակում է՝ միևնույն կամ տարբեր էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցողների կողմից օգտագործվող երկու հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի ֆիզիկական և տրամաբանական կապակցում, որի արդյունքում մեկ ծառայություն մատուցողի օգտատերերը հնարավորություն ունեն տեղեկություններ փոխանակելու միևնույն կամ մեկ այլ ծառայություն մատուցողի օգտատերերի հետ կամ հասանելիություն ունենալ մեկ այլ ծառայություն մատուցողի ծառայություններին.

**«հեռահաղորդակցություն»** նշանակում է՝ էլեկտրամագնիսական ազդանշանների փոխանցումը, ինչպիսիք են ձայնը, տվյալները, պատկերը և դրանց ցանկացած համակցություն: Հեռահաղորդակցության ծառայությունների ոլորտը չի ընդգրկում այնպիսի տնտեսական գործունեություն, որը ենթադրում է այնպիսի նյութերի տրամադրում, որոնց փոխադրման համար պահանջվում է հեռահաղորդակցության ծառայություններ:

**ՀՈԴՎԱԾ 2. Հակամրցակցային երաշխիքներ**

1. Յուրաքանչյուր Կողմ իրականացնում է համապատասխան միջոցներ՝ առանձին կամ միասին խոշոր օպերատոր հանդիսացող մատակարարների կողմից հակամրցակցային գործելակերպում ներգրավվելը կամ այն շարունակելը կանխելու նպատակով:

2. Առաջին պարբերության մեջ նշված հակամրցակցային գործելակերպերը մասնավորապես ներառում են՝

ա) հակամրցակցային խաչաձև սուբսիդավորման մեջ ներգրավվելը.

բ) մրցակիցներից ստացված տեղեկությունները հակամրցակցային նպատակներով օգտագործելը, և

գ) էական հարմարությունների մասին տեխնիկական այն տեղեկությունները և առևտրային առումով համապատասխան այն տեղեկություններն այլ ծառայություն

մատուցողների համար ժամանակին հասանելի չդարձնելը, որոնք նրանց անհրաժեշտ են ծառայություններ մատուցելու համար:

**ՀՈԴՎԱԾ 3. Փոխկապակցում**

1. Այս հոդվածը վերաբերում է հանրային հեռահաղորդակցության ցանցեր կամ ծառայություններ մատուցող մատակարարների հետ կապին՝ մեկ մատակարարի օգտատերերին մեկ այլ մատակարարի օգտատերերի հետ հաղորդակցվելու և մեկ այլ մատակարարի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու հնարավորություն տալու համար:

2. Հեռահաղորդակցության ծառայություններ մատուցելու լիցենզիա ունեցող ցանկացած մատակարար պետք է ունենա հեռահաղորդակցության ցանցերի և ծառայությունների այլ մատակարարների հետ փոխկապակցման իրավունք: Փոխկապակցման սակագները սկզբունքորեն պետք է հիմնված լինեն արժեքի վրա կամ հիմնված լինեն համապատասխան մատակարարների համար այլ կերպ կարգավորվող սակագների վրա (արդար սակագին):

3. Ցանցում փոխկապակցման կետը պետք է լինի ծառայություն մատուցողների միջև բանակցությունների և տեխնիկական իրագործելիության առարկա: Նշված բանակցությունների ընթացքում ծառայություն մատուցողների համար դժվարություններ առաջանալու դեպքում իրավասու մարմինը պետք է կարողանա միջամտել և որոշում կայացնել՝ համաձայն Կողմերի համապատասխան կանոնակարգերի: Նման բանակցություններն ապահովում են, որ փոխկապակցման համաձայնագրերը կնքվեն՝

ա) ոչ խտրական ժամկետներով, պայմաններով (ներառյալ տեխնիկական ստանդարտները և մասնագրերը) և դրույքաչափով, ինչպես նաև այնպիսի որակով, որը պակաս բարենպաստ չէ, քան այն, որը տրամադրվում է իր կողմից տրամադրվող նույնատիպ ծառայությունների համար, կամ իրար հետ չփոխկապակցված ծառայություններ մատուցող օպերատորների կողմից տրամադրվող նույնատիպ ծառայությունների կամ էլ դրանց դուստր ձեռնարկությունների կամ այլ փոխկապակցված անձանց համար, և

բ) ժամանակին, այնպիսի ժամկետներով, պայմաններով (ներառյալ տեխնիկական ստանդարտները և մասնագրերը) և ծախսերի վրա հիմնված դրույքաչափով, որոնք թափանցիկ են, ողջամիտ, հաշվի են առնում տնտեսական իրագործելիությունը և բավարար չափով տարանջատված են այնպես, որ օպերատորը կարիք չունենա վճարելու այն ցանցային տարրերի կամ հարմարությունների համար, որոնք մատուցվող ծառայությունների համար չեն պահանջվում:

**ՀՈԴՎԱԾ 4. Գաղտնիություն**

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր տարածքում հանրային հեռահաղորդակցության ցանցերի կամ ծառայությունների մատակարարները ձեռնարկեն համապատասխան քայլեր՝ պաշտպանելու, *inter alia*՝

ա) անհատների անձնական կյանքը՝ կապված անձնական տվյալների մշակման և տարածման հետ.

բ) անհատական գրառումների գաղտնիությունը, և

գ) հեռահաղորդակցության ծառայություններ մատուցողների և վերջնական օգտագործողների կամ նրանց վերաբերող առևտրային առումով զգայուն տեղեկությունների գաղտնիությունը: Հեռահաղորդակցության ծառայություն մատուցողի կողմից ստացված տվյալներն ու տեղեկություններն օգտագործվում են միայն այդ ծառայությունները մատուցելու նպատակով:

2. Սույն հավելվածում ոչինչ չի սահմանափակում Կողմի իրավունքը՝ պաշտպանելու անձնական տվյալները, անձնական կյանքի գաղտնիությունը և անհատական գրառումների ու հաշիվների գաղտնիությունը, ինչպես նաև օրենքով պաշտպանված այլ տեղեկություններ:

**ՀՈԴՎԱԾ 5. Համընդհանուր ծառայությունը**

1. Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի սահմանելու համընդհանուր ծառայություն մատուցելու պարտավորության այն տեսակը, որը ցանկանում է ունենալ:

2. Կողմերի՝ համընդհանուր ծառայությունը կարգավորող միջոցները պետք է լինեն թափանցիկ, օբյեկտիվ և ոչ խտրական: Դրանք պետք է նաև չեզոք լինեն մրցակցության նկատմամբ և չլինեն ավելի ծանրաբեռնող, քան անհրաժեշտ է Կողմի սահմանած համընդհանուր ծառայության տեսակի համար:

**ՀՈԴՎԱԾ 6. Լիցենզավորման ընթացակարգ**

1. Եթե հեռահաղորդակցության ծառայությունների մատակարարման համար պահանջվում է լիցենզիա կամ զիջումներ, ապա Կողմի իրավասու մարմինները հրապարակում են հետևյալը.

ա) այդ լիցենզիայի կամ զիջումների պայմանները, և

բ) լիցենզիայի և զիջումների համար ներկայացված դիմումի հետ կապված որոշում կայացնելու համար սովորաբար պահանջվող ժամանակահատվածի մասին տեղեկություն:

2. Եթե հեռահաղորդակցության ծառայություն մատուցելու համար պահանջվում է լիցենզիա կամ կոնցեսիա, և եթե համապատասխան պայմանները բավարարված են, ապա Կողմի իրավասու մարմինը դիմումատուին տրամադրում է լիցենզիա կամ կոնցեսիա՝ այդ Կողմի օրենսդրության համաձայն վերջինիս դիմումի ներկայացումն ամբողջական համարվելուց հետո ողջամիտ ժամկետում:

3. Կողմի իրավասու մարմինը որոշում կայացնելուց անմիջապես հետո դիմումատուին տեղեկացնում է իր դիմումի արդյունքի մասին: Եթե որոշում է կայացվում լիցենզիայի կամ կոնցեսիայի դիմումը մերժելու մասին, ապա հարցման դեպքում Կողմի իրավասու մարմինը դիմումատուին տեղեկացնում է մերժման պատճառի մասին:

**ՀՈԴՎԱԾ 7. Անկախ կարգավորող մարմինը**

1. Յուրաքանչյուր Կողմի հեռահաղորդակցության ծառայությունների կարգավորող մարմինը պետք է առանձին լինի հիմնական հեռահաղորդակցության ծառայությունների ցանկացած մատուցողից և հաշվետու չլինի նրան:

2. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր կարգավորող մարմնի

որոշումները և դրա կողմից կիրառվող ընթացակարգերը լինեն անկողմնակալ շուկայի բոլոր մասնակիցների համար:

**ՀՈԴՎԱԾ 8. Սահմանափակ ռեսուրսները**

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ հեռահաղորդակցությունների բնագավառում սահմանափակ ռեսուրսների, այդ թվում՝ հաճախականությունների, թվերի և սերվիտուտի բաշխման և դրանք օգտագործելու իր ընթացակարգերն իրականացվեն օբյեկտիվ, ժամանակին, թափանցիկ և ոչ խտրական ձևով: Յուրաքանչյուր Կողմ պետք է հրապարակի բաշխված հաճախականությունների միջակայքերի ընթացիկ իրավիճակի մասին տեղեկությունները, իսկ Կառավարության կողմից առանձին նպատակներով օգտագործման համար բաշխված հաճախականությունների վերաբերյալ մանրամասների հրապարակում չի պահանջվում:

2. Ոչ պետական ռադիոէլեկտրական հեռահաղորդակցության ծառայությունների համար տիրույթ հատկացնելիս յուրաքանչյուր Կողմ պետք է ձգտի, որպես կանոն, հիմնվել շուկայական մոտեցումների վրա՝ ամբողջությամբ հաշվի առնելով հանրային շահերը:

**ՀՈԴՎԱԾ 9. Հեռահաղորդակցության բնագավառում ծագած վեճերի լուծումը**

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ՝

ա) մատակարարները կարող են դիմել իրենց կարգավորող մարմին կամ այլ համապատասխան մարմին՝ խոշոր մատակարարների հետ կապված վեճերը լուծելու համար.

բ) խոշոր մատակարարի հետ փոխկապակցման համար դիմած մատակարարը ցանկացած պահի կամ հրապարակայնորեն սահմանված ողջամիտ ժամկետից հետո կարող է դիմել իր կարգավորող մարմնին՝ ողջամիտ ժամկետում լուծելու այդ խոշոր մատակարարի հետ փոխկապակցման համապատասխան պայմանների, պահանջների ու սակագների վերաբերյալ վեճերը, և

գ) մատակարարները, որոնց վերաբերում է կարգավորող մարմնի որոշումները, կարող են բողոքարկել անկախ վարչական մարմին և (կամ) դատարան՝ Կողմի օրենսդրությանը համապատասխան:

**ՀՈԴՎԱԾ 10. Թափանցիկությունը**

Յուրաքանչյուր Կողմ ապահովում է հանրային հեռահաղորդակցության ցանցերի և ծառայությունների հասանելիության և դրանց օգտագործման վերաբերյալ պայմանների մասին համապատասխան տեղեկությունների հանրամատչելի լինելը, ներառյալ՝

ա) սակագները և ծառայությունների այլ պայմաններ ու դրույթներ.

բ) նման ցանցերի և ծառայությունների տեխնիկական միջերեսների մասնագրերը.

գ) այդպիսի հասանելիությանն ու օգտագործմանը վերաբերող ստանդարտների մշակման և ընդունման համար պատասխանատու մարմինների մասին

տեղեկությունները.

դ) տերմինալի կամ այլ սարքավորումների հանրային հեռահաղորդակցության ցանցին միացման նկատմամբ կիրառելի պայմանները, և

ե) առկայության դեպքում՝ ծանուցումները, թույլտվությունները, գրանցման կամ լիցենզավորման պահանջները:

**ՀՈԴՎԱԾ 11. ՃԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ**

1. Որևէ կողմ չի կարող խոչընդոտել հանրային հեռահաղորդակցության ծառայություններ մատուցողներին ճկուն կերպով ընտրելու իրենց ծառայությունները մատուցելու համար օգտագործվող տեխնոլոգիաները, ներառյալ առևտրային շարժական անլար ծառայությունները՝ հանրային քաղաքականության օրինական շահերը բավարարելու համար անհրաժեշտ պահանջներին համապատասխան, պայմանով, որ նման ընտրությունը սահմանափակող որևէ միջոց չի մշակվում, ընդունվում կամ կիրառվում այնպես, որ ստեղծվեն ավելորդ խոչընդոտներ առևտրի համար:

2. Ավելի ստույգ, այս հավելվածում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես խոչընդոտ հեռահաղորդակցության ոլորտում կարգավորող մարմնի համար՝ պահանջելու համապատասխան լիցենզիա կամ այլ թույլտվություն՝ հանրային հեռահաղորդակցության յուրաքանչյուր ծառայություն մատուցելու համար:

## ՀԱՎԵԼՎԱԾ VII
## ԿՈԼԵԳԻԱՅԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

**Ժամանակացույցը**

1. Կողմերի հետ խորհրդակցություններ անցկացնելուց հետո Կոլեգիան հնարավորության դեպքում Կոլեգիայի վերջնական անդամի նշանակումից հետո 7 օրվա ընթացքում սահմանում է Կոլեգիայի աշխատանքի ժամանակացույցը: Գլխին կցված նախնական ժամանակացույցն օգտագործվում է որպես ուղենիշ:

2. Կոլեգիայի աշխատանքի ժամկետը, որպես կանոն, չի գերազանցում 140 օրը՝ սկսած Կոլեգիայի ստեղծման օրվանից մինչև վերջնական զեկույցի ներկայացման օրը, եթե Կողմերն այլ բան չեն համաձայնում:

3. Եթե Կոլեգիան համարում է, որ անհրաժեշտ է փոփոխել ժամանակացույցը, ապա այն գրավոր ձևով տեղեկացնում է Կողմերին առաջարկվող փոփոխության մասին՝ ներկայացնելով դրա հիմքերը:

**Գրավոր հայտարարությունները և այլ փաստաթղթեր**

4. Եթե Կոլեգիան այլ որոշում չի կայացնում, ապա բողոք ներկայացրած Կողմն իր առաջին գրավոր հայտարարությունը Կոլեգիային է ներկայացնում ոչ ուշ, քան Կոլեգիայի վերջնական անդամի նշանակման ամսաթվից հետո 35 օրվա ընթացքում: Կողմը, որի դեմ բողոք է ներկայացվել, իր առաջին գրավոր հայտարարությունը ներկայացնում է ոչ ուշ, քան բողոք ներկայացրած Կողմի առաջին գրավոր հայտարարությունը ներկայացվելու օրվանից 30 օր հետո: Օրինակները տրամադրվում են Կոլեգիայի յուրաքանչյուր անդամի:

5. Յուրաքանչյուր Կողմ իր առաջին գրավոր հայտարարության օրինակը տրամադրում է նաև մյուս Կողմին՝ այն կոլեգիային ներկայացնելուն զուգահեռ:

6. Լսումն ավարտվելուց հետո՝ 5 օրվա ընթացքում, յուրաքանչյուր Կողմ կարող է կոլեգիային և մյուս Կողմին տրամադրել լրացուցիչ գրավոր հայտարարություն՝ պատասխանելով ցանկացած հարցի, որը ծագել է լսման ընթացքում:

7. Կոլեգիային կամ մի Կողմի կողմից մյուս Կողմին տրամադրված բոլոր գրավոր փաստաթղթերը նաև տրամադրվում են էլեկտրոնային ձևով:

8. Ցանկացած պահանջի, ծանուցման, գրավոր հայտարարության մեջ կամ կոլեգիայի վարույթի հետ կապված այլ փաստաթղթում հանդիպող վրիպակների տեսքով աննշան սխալները կարող են ուղղվել այն նոր փաստաթղթի անհապաղ հանձնման միջոցով, որում հստակ նշվում են փոփոխությունները:

**Կոլեգիայի գործունեությունը**

9. Կոլեգիայի նախագահը նախագահում է դրա բոլոր նիստերը: Կոլեգիան կարող է նախագահին պատվիրակել վարչական և ընթացակարգային որոշումներ կայացնելու իրավասություն:

10. Կոլեգիայի խորհրդակցություններն անցկացվում են խորհրդապահական կարգով: Կոլեգիայի խորհրդակցություններին կարող են մասնակցել միայն կոլեգիայի անդամները: Կոլեգիաների զեկույցները կազմվում են առանց Կողմերի մասնակցության՝ հաշվի առնելով տրամադրված տեղեկությունները և արված հայտարարությունները:

11. Կոլեգիայի զեկույցում Կոլեգիայի առանձին անդամների կողմից արտահայտված կարծիքները շարադրվում են անանուն:

**Լսումները**

12. 1-ին կանոնի համաձայն կազմված ժամանակացույցով նախատեսվում է, որ Կողմերն իրենց փաստարկները կոլեգիային են ներկայացնում առնվազն մեկ լսման ընթացքում:

13. Կոլեգիան կարող է հրավիրել լրացուցիչ լսումներ Կողմերի կողմից նման համաձայնություն ձեռք բերելու դեպքում:

14. Կոլեգիայի բոլոր անդամները ներկա են գտնվում լսումներին: Կոլեգիայի լսումներն անցկացվում են դռնփակ՝ միայն կոլեգիայի անդամների և Կողմերի մասնակցությամբ: Այնուհանդերձ, Կողմերի հետ խորհրդակցությամբ լսումներին կարող են ներկա գտնվել օգնականներ, թարգմանիչներ կամ նշանակված սղագրողներ՝ Կոլեգիային իր աշխատանքը կատարելու հարցում օժանդակելու համար: Կոլեգիայի կողմից սահմանված ցանկացած նման կարգավորում կարող է փոփոխվել Կողմերի համաձայնությամբ:

15. Կոլեգիան լսումն անցկացնում է այնպիսի եղանակով, որով ապահովվում է բողոք ներկայացրած Կողմին և պատասխանող Կողմին իրենց փաստարկները ներկայացնելու համար հավասարաչափ ժամանակի տրամադրումը: Կոլեգիան լսումն անցկացնում է հետևյալ կարգով՝ բողոք ներկայացրած Կողմի փաստարկ, պատասխանող Կողմի փաստարկ, բողոք ներկայացրած Կողմի պատասխան, պատասխանող Կողմի հակընդդեմ պատասխան, բողոք ներկայացրած Կողմի եզրափակիչ հայտարարություն և պատասխանող Կողմի եզրափակիչ հայտարարություն: Նախագահը կարող է բանավոր փաստարկների ներկայացման համար սահմանել ժամանակային սահմանափակումներ՝ ապահովելու համար, որ յուրաքանչյուր Կողմի տրամադրվի հավասարաչափ ժամանակ:

**Հարցերը**

16. Վարույթի ընթացքում ցանկացած ժամանակ Կոլեգիան կարող է ցանկացած Կողմի հարցեր ուղղել: Կողմերն անհապաղ և լիարժեք պատասխան են ներկայացնում կոլեգիայի այնպիսի տեղեկատվության հարցմանը, որն այն համարում է անհրաժեշտ և նպատակահարմար:

17. Եթե հարցը ներկայացվում է գրավոր, ապա յուրաքանչյուր Կողմ այդ հարցերին տրված իրենց պատասխանների օրինակը Կոլեգիային տրամադրելուն զուգահեռ տրամադրում է նաև մյուս Կողմին: Յուրաքանչյուր Կողմ ունի մյուս Կողմի պատասխանի վերաբերյալ գրավոր դիտողություններ ներկայացնելու հնարավորություն:

**Գաղտնիությունը**

18. Կոլեգիայի լսումները և դրան ներկայացված փաստաթղթերը գաղտնի են: Յուրաքանչյուր Կողմ գաղտնի է համարում մյուս Կողմի ներկայացրած այն տեղեկությունները, որոնք այդ Կողմը սահմանել է որպես գաղտնի:

19. Եթե Կողմն իր գրավոր հայտարարությունները Կոլեգիայի համար

սահմանում է գաղտնի, ապա այն մյուս Կողմի պահանջով Կոլեգիային և մյուս Կողմին տրամադրում է իր գրավոր փաստարկներում առկա տեղեկությունների ամփոփ տարբերակը: Կողմերի կողմից այլ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում տեղեկությունների ոչ գաղտնի ամփոփումը կարող է ողջամիտ ժամկետում հրապարակվել: Սույն կանոններում ոչինչ չի խոչընդոտում Կողմին հրապարակավ հայտնել իր դիրքորոշումը:

**Փորձագետների դերը**

20. Կոլեգիան կարող է Կողմի պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ ստանալ տեղեկություններ և տեխնիկական խորհրդատվություն իր կողմից համապատասխան համարվող ցանկացած անհատից կամ մարմնից՝ պայմանով, որ Կողմերը համաձայն են, ինչպես նաև Կողմերի կողմից համաձայնեցված պայմաններով: Կոլեգիան Կողմերին տրամադրում է ցանկացած տեղեկություն՝ դիտողություններ ներկայացնելու նպատակով:

**Աշխատանքային լեզուն**

21. Կոլեգիայի աշխատանքային լեզուն, այդ թվում՝ գրավոր հայտարարությունների, բանավոր հայտարարությունների կամ ելույթների ներկայացման, կոլեգիայի զեկույցի և Կողմերի միջև իրականացվող բոլոր գրավոր և բանավոր հաղորդակցությունների լեզուն անգլերենն է:

**Լսումների անցկացման վայրը**

22. Կոլեգիայի լսումների անցկացման վայրը որոշվում է Կողմերի համաձայնությամբ: Եթե համաձայնություն ձեռք չի բերվում, ապա առաջին լսումն անցկացվում է պատասխանող Կողմի տարածքում, որի դեմ բողոք է ներկայացվել, իսկ ցանկացած լրացուցիչ լսում անցկացվում է հաջորդաբար Կողմերի տարածքներում:

**Ծախքերը**

23. Կոլեգիան հաշվառում և կազմում է վարույթի առնչությամբ կրած բոլոր ընդհանուր ծախքերի վերջնական հաշվետվությունը, այդ թվում՝ դրա օգնականներին, նշանակված սղագրողներին կամ այլ անձանց վճարման համար կատարված ծախքերը, որոնց վարձում է:

**Կոլեգիայի նախնական ժամանակացույցը**

Կոլեգիան ստեղծվել է __/__/____-ին:

1. Կողմերի առաջին հայտարարությունների ստացումը՝

ա) բողոք ներկայացրած Կողմ՝ Կոլեգիայի երրորդ անդամի նշանակման ամսաթվից 35 օր հետո.

բ) պատասխանող Կողմ՝ (i)-ից 20 օր հետո.

2. Կողմերի հետ առաջին լսումն անցկացնելու ամսաթիվը՝ պատասխանող Կողմի առաջին հայտարարության ստացումից 20 օր հետո.

3. Կողմերի լրացուցիչ գրավոր հայտարարությունների ստացումը՝ առաջին լսման ամսաթվից 10 օր հետո.

4. Կողմերին նախնական զեկույցի տրամադրումը՝ լրացուցիչ գրավոր հայտարարությունների ստացումից 90 օր հետո.

5. Կողմերի կողմից նախնական զեկույցի վերաբերյալ գրավոր դիտողություններ ներկայացվելու վերջնաժամկետը՝ նախնական զեկույցի տրամադրման օրվանից 15 օր հետո. և

6. Կողմերին վերջնական զեկույցի տրամադրումը՝ նախնական զեկույցը ներկայացնելուց հետո 140 օրվա ընթացքում:

## ՀԱՎԵԼՎԱԾ VIII
## ԿՈԼԵԳԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՒՅՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

**Սահմանումները**

1. Սույն հավելվածի նպատակներով՝

ա) «օգնական» նշանակում է՝ անձ, որը կոլեգիայի անդամի նշանակման պայմանների համաձայն իրականացնում է հետազոտություններ կամ աջակցություն է տրամադրում կոլեգիայի անդամին.

բ) «կոլեգիայի անդամ» նշանակում է՝ 8-րդ հոդվածի համաձայն ստեղծված կոլեգիայի անդամ.

գ) «վարույթ» այլ բան սահմանված չլինելու դեպքում նշանակում է՝ սույն գլխի շրջանակներում կոլեգիայի վարույթ. և

դ) «աշխատակազմ» կոլեգիայի անդամի մասով նշանակում է՝ կոլեգիայի անդամի ղեկավարության և հսկողության ներքո գտնվող անձինք՝ բացառությամբ օգնականների:

**Պարտավորությունները գործընթացի շրջանակներում**

2. Կոլեգիայի յուրաքանչյուր անդամ զերծ է մնում ոչ պատշաճ վարքից կամ ոչ պատշաճ վարքի տպավորություն ստեղծելուց, անկախ և անաչառ է, խուսափում է ուղղակի և անուղղակի շահերի բախումներից և պահպանում է վարքագծի բարձր չափանիշները՝ վեճերի կարգավորման մեխանիզմի ամբողջականությունն ու անկողմնակալությունը պահպանելու համար: Կոլեգիայի նախկին անդամները կատարում են 17-20-րդ պարբերություններում սահմանված պարտավորությունները:

**Տեղեկությունների բացահայտման պարտավորությունները**

3. Թեկնածուն մինչև սույն Համաձայնագրի համաձայն իր՝ որպես կոլեգիայի անդամ ընտրության հաստատումը բացահայտում է ցանկացած շահ, հարաբերություն և հարց, որը կարող է ազդել իր անկախության կամ անաչառության վրա, կամ որը կարող է իրատեսորեն ստեղծել ոչ պատշաճ վարքի կամ կողմնակալության տպավորություն վարույթի ընթացքում: Այս նպատակով թեկնածուն գործադրում է բոլոր ողջամիտ ջանքերը՝ այդ շահերի, հարաբերությունների կամ հարցերի վերաբերյալ տեղեկանալու համար:

4. Ընտրվելուց հետո կոլեգիայի անդամը շարունակում է գործադրել բոլոր ողջամիտ ջանքերը 3-րդ պարբերության մեջ նշված շահերի, հարաբերությունների և հարցերի վերաբերյալ տեղեկանալու ուղղությամբ և բացահայտում է դրանք Համատեղ կոմիտեին՝ գրավոր ներկայացնելով Կողմերի քննարկմանը: Բացահայտման պարտավորությունը շարունակական բնույթ ունեցող պարտականություն է, որով պահանջվում է, որ կոլեգիայի անդամը բացահայտի այն բոլոր շահերը, հարաբերությունները կամ հարցերը, որոնք կարող են ծագել վարույթի որևէ փուլում:

**Կոլեգիայի անդամների կողմից պարտականությունների կատարումը**

5. Կոլեգիայի անդամը կատարում է սույն գլխի դրույթները և կիրառելի ընթացակարգային կանոնները:

6. Ընտրվելու դեպքում կոլեգիայի անդամը հանգամանորեն և արագ կատարում է իր պարտականությունները վարույթի ամբողջ ընթացքում՝ դրսևորելով արդարամտություն և բարեխղճություն:

7. Կոլեգիայի անդամը չի զրկում մյուս անդամներին վարույթի բոլոր փուլերին մասնակցելու հնարավորությունից:

8. Կոլեգիայի անդամն ուսումնասիրում է միայն վարույթի ընթացքում բարձրացվող այն հարցերը, որոնց վերաբերյալ անհրաժեշտ է որոշում կայացնել, և որոշում կայացնելու պարտականությունը չի պատվիրակում որևէ այլ անձի:

9. Կոլեգիայի անդամը ձեռնարկում է բոլոր պատշաճ միջոցները՝ 2-րդ, 3-րդ, 4-րդ, 19-րդ, 20-րդ և 21-րդ պարբերությունների մասին Կոլեգիայի անդամի օգնականի և անձնակազմի իրազեկվածությունը և նրանց կողմից այդ կետերի կատարումն ապահովելու համար:

10. Կոլեգիայի անդամը չի մասնակցում վարույթին վերաբերող միակողմանի (ex parte ) հաղորդակցություններին:

11. Կոլեգիայի անդամը չի հաղորդում Կոլեգիայի մեկ այլ անդամի կողմից սույն հավելվածի փաստացի կամ հնարավոր խախտումների մասին, եթե հաղորդումը չի ներկայացվում երկու Կողմերին կամ անհրաժեշտ չէ Կոլեգիայի անդամի կողմից սույն հավելվածը խախտելու հանգամանքը կամ խախտելու հնարավորությունը պարզելու համար:

**Կոլեգիայի անդամների անկախությունը և անաչառությունը**

12. Կոլեգիայի անդամն անկախ է և անաչառ: Կոլեգիայի անդամը գործում է արդարացիորեն և խուսափում է ոչ պատշաճ վարքագծից կամ կողմնակալության դրսևորումից:

13. Կոլեգիայի անդամը չի գործում անձնական շահերի, արտաքին ճնշման, քաղաքական հայացքների, հանրային աղմուկի, Կողմի նկատմամբ հավատարմության կամ քննադատության ենթարկվելու վախի ազդեցության ներքո:

14. Կոլեգիայի անդամն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի կրում որևէ պարտավորություն կամ ընդունում որևէ արտոնություն, որը որևէ կերպ կխոչընդոտի, կամ որը ենթադրաբար կարող է խոչընդոտել նրա պարտականությունների պատշաճ կատարումը:

15. Կոլեգիայի անդամը չի օգտագործում դրա կազմում իր զբաղեցրած դիրքը՝ որևէ անձնական կամ մասնավոր շահ առաջ մղելու համար: Կոլեգիայի անդամը զերծ է մնում այնպիսի գործողություններ կատարելուց, որոնք կարող են տպավորություն ստեղծել, թե այլ անձինք ունեն հատուկ կարգավիճակ՝ կոլեգիայի անդամի վրա ազդելու համար: Կոլեգիայի անդամը գործադրում է բոլոր ջանքերը՝ այլ անձանց կողմից իրենց այդպիսի կարգավիճակում ներկայացնելու հնարավորությունը կանխելու կամ խոչընդոտելու համար:

16. Կոլեգիայի անդամը չի թույլատրում, որ նախկին կամ ներկա ֆինանսական, գործնական, մասնագիտական, ընտանեկան կամ սոցիալական կապերը կամ պարտավորություններն ազդեն իր վարքագծի կամ դատողության վրա:

17. Կոլեգիայի անդամը խուսափում է այնպիսի հարաբերություններում ներգրավվելուց կամ այնպիսի ֆինանսական շահ ձեռք բերելուց, որը կարող է ազդել իր անաչառության վրա կամ ողջամտորեն կարող է առաջացնել ոչ պատշաճ վարքի կամ կողմնակալության դրսևորում:

**Կոնկրետ իրավիճակներում պարտականությունները**

18. Կոլեգիայի անդամը կամ նախկին անդամը զերծ է մնում այնպիսի գործողություններից, որոնք կարող են առաջացնել այնպիսի տպավորություն, որ կոլեգիայի անդամն իր պարտականությունները կատարելիս եղել է կողմնակալ կամ օգուտ է ստանալու կոլեգիայի որոշումից կամ զեկույցից:

**Գաղտնիության պահպանումը**

19. Կոլեգիայի անդամը կամ նախկին անդամը երբևէ չի բացահայտում կամ օգտագործում վարույթի վերաբերյալ կամ վարույթի ընթացքում ձեռք բերած որևէ գաղտնի տեղեկություն՝ բացառությամբ այդ վարույթի նպատակների, և որևէ դեպքում չի բացահայտում կամ օգտագործում այդ տեղեկությունն անձնական օգուտ ստանալու կամ այլ անձանց համար օգուտ ստանալու կամ այլ անձանց շահերի վրա բացասական ազդեցություն ունենալու նպատակով:

20. Կոլեգիայի անդամը կամ նախկին անդամը երբևէ չի բացահայտում կոլեգիայի խորհրդակցությունները կամ կոլեգիայի որևէ անդամի կարծիքը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա պահանջվում է իրավական կամ սահմանադրական պահանջներով:

## ՀԱՎԵԼՎԱԾ IX
## ԷՆԵՐԳԵՏԻԿ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՈԼՈՐՏ

Սույն Համաձայնագրի կապակցությամբ Կողմերը ձեռք են բերել հետևյալ պայմանավորվածությունները.

ա) ԱՄԷ-ն անկախ, ինքնավար դաշնային պետություն է՝ կազմված 7 ինքնավար անդամ էմիրություններից (Անդամ էմիրություններ), և համաձայն դրա Սահմանադրության՝ յուրաքանչյուր Անդամ էմիրություն պահպանում է իր լիարժեք ինքնավարությունը, ինքնավար իրավունքները և բացարձակ իրավազորությունը բնական պաշարների և հարստությունների նկատմամբ, որոնցից էներգետիկ ռեսուրսների ոլորտը սույն հավելվածի առարկան է: Սույն հավելվածի նպատակներով «Էներգետիկ ռեսուրսների ոլորտ» նշանակում է՝ բոլոր ածխաջրածինները, օրինակ՝ նավթը, գազը և կոնդենսատը, դրանց ածանցյալները և առաջնային կողմնակի մթերքը՝ տիրապետման, կառավարման, հետախուզման, մշակման և արդյունահանման, շահագործման (այդ թվում՝ շերտերի կառավարում), փոխադրման, պահպանման, վերամշակման և մշակման, բաշխման, ընդհուպ՝ մանրածախ բաշխման առումով:

բ) Ի ընդունումն վերոնշյալի՝ Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետությանը չի շնորհում իրավունքներ կամ ԱՄԷ-ի կամ դրա որևէ Անդամ էմիրության համար չի առաջացնում պարտավորություններ Էներգետիկ ռեսուրսների ոլորտի մասով: Հետևաբար Էներգետիկ ռեսուրսների ոլորտը դուրս է թողնված Համաձայնագրի բոլոր հայեցակետերից և դրույթներից, այդ թվում՝ 5-րդ գլխից (Վեճերի կարգավորումը): Որևէ Անդամ էմիրության էներգետիկ ռեսուրսների ոլորտին առնչվող ցանկացած հարց գտնվում է Անդամ էմիրությունների բացարձակ իրավազորության ներքո, և յուրաքանչյուր Անդամ էմիրության բոլոր որոշումները, որոնք կայացվել են այդ Անդամ էմիրության՝ իր իրավազորությանը ենթակա իրավասու մարմինների կողմից Էներգետիկ ռեսուրսների ոլորտի վերաբերյալ (Իրավասու մարմիններ), վերջնական են, պարտադիր են և ենթակա չեն վերանայման կամ վիճարկման:

գ) Չնայած վերոնշյալին՝ սույն հավելվածի մեկնաբանության կամ կիրառության հարցում տարբերության դեպքում ԱՄԷ-ն և Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում են իրականացնել խորհրդակցություններ ցանկացած Կողմի պահանջով: Նման խորհրդակցությունների նպատակով 5.6 հոդվածը (Խորհրդակցություններ)՝ բացառությամբ 5.6.8 հոդվածի, կիրառվում է *mutatis mutandis*: Կողմերը պահանջն ստանալու օրվանից 60 օրվա ընթացքում գործադրում են բոլոր ջանքերը՝ փոխադարձաբար ընդունելի լուծում գտնելու համար:

դ) Այն դեպքում, երբ ԱՄԷ-ն և Հայաստանի Հանրապետությունը չեն հասնում փոխհամաձայնեցված լուծման խորհրդակցությունների մեկնարկից հետո 60 օրվա ընթացքում, կամ եթե ԱՄԷ-ն փոխհամաձայնեցված լուծումը չի կատարում համաձայնեցված ժամկետում, ապա Հայաստանի Հանրապետության միակ միջոցը կլինի Համաձայնագրի համապատասխան արտոնությունների կասեցումն այն առևտրային հետևանքներին համաչափորեն, որոնք տվյալ միջոցառումն առաջացնում է, կամ առկա է այդպիսի սպառնալիք: Ավելին, Հայաստանի Հանրապետությունը վերացնում են իրենց փոխհատուցման միջոցն այնքանով, որքանով ԱՄԷ-ի տվյալ

միջոցառումն այլևս չի գործում: Վերոնշյալ ընթացակարգը նաև կիրառվում է այնպիսի վեճերի դեպքում, որոնք վերաբերում են Հայաստանի Հանրապետության փոխհատուցման միջոցի համաչափ լինելուն, և ԱՄԷ-ն ի վերջո համանման ձևով ունի արտոնությունները համաչափորեն կասեցնելու իրավունք:

ե) ԱՄԷ-ն և Հայաստանի Հանրապետությունը համաձայնում են, որ սույն հավելվածը կազմում է Համաձայնագրի անբաժանելի մասը, և սույն հավելվածի և Համաձայնագրի դրույթների միջև անհամապատասխանության դեպքում, որը քիչ հավանական է, սույն հավելվածը գերակայում է այդ անհամապատասխանության սահմաններում: